

6877

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱԾ, ՅՈՅԾ ԵՒ ՍԵՐ



Կազմեց
ՅՈՒՆԱՆԱԿԱՆ աւագ բահ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Խոկորդ սպազրութիւն

28(075)

Մ-38

Թ Ի Ֆ Լ Ի Պ
րատ. օր. 7, Ազգանվանի, Պոլից. 7,
1913

H A P M
H, 2-9582
28 (075)

1 OCT 2008

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՀԱՒԱՏ, ՅՈՅՎ և ՍԵՐ

ԲԱՑԱՏՐՈՒՄԸ ՀԵՅՈՑ ՍԹԱՔԵԼԵԿՎԱՆ ՍՈՒՐԲ
ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄԵՆՈԽԹԵԱՆ ՀՄՄԱՉԵՆ

.Տ. Ք. Ամենալուսական առաջին հայոց հայոց հայոց հայոց

3639


Դայան 18 տարեկան դայան գաղտնական պատճեն
ՅՈՎ. ՀԱՅՆԱԼՈՒ աւագ բան ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Կրօնական Թիֆլիսի օրինրդական III զիմնազիոնի
եւ Անդրկովկաստան իգական ինստիտուտի:

ԴԱՍԱԳԻՐՅ

Պետական միջնակարգ դպրոցների IV և V դաշ-
սարանների համար:

ԵՐԿՐՈՐԴ պատգուրի և



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Երևանակ. օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7.

1913

ԱՅՍ 100

ՀԱՐՄԵՆԻՑԱԴՐ


ԳՅՈՒ Կ ՍՅԱԾ ՇՄԱՋԸ

«Արդ մնան Հաւատք, Յոյս եւ Սէր, տղա երեքեան
եւ մեծ քան զոսա սէր է» Ա. Կորնթ. ԺԹ. 13.

Թոյլ տամք զտպագրութիւն գրքուկիս: 31 մարտի
1911 ամի ի Ս. Էջմիածին:

Տեղակալ Կաթողիկոսի ամենայն Հայոց
Գևորգ արքեպ. Սուրբեանց.

Թ. 1435



39787-63

Հայաստ դամ և միշ սժառադասից նև լըլման ջան
առաքարդայի մայահանութիզ դոյլ ժեմդյ և ցանո
առաքել և օդիս սժառադասար ման վրամդար

Պ Ս Մ Ա Զ Ա Բ Ս Ն
գուշի այրաբան մազ պահ
գումար վայում անուն արական խորհնակ օնն
առ առ

Երկար տարիների փորձառութիւնովս 'ի նկատի
առնելով ներկայումս գոյութիւն ունեցող քրիստոնէա-
կան վարդապետութեան դասագրքերի մի քանի ան-
յարմարութիւնները ժամանակիս հանգամանքների հա-
մեմատ, նա մանաւանդ պետական դպրոցներում, ոմանց
գրաբարի անմատչելի վկայութիւնների և ոմանց նիւ-
թի անկանոն դասաւորութեան, հարկ համարեցի կազ-
մել ներկայ դասագիրքը, որի նիւթն է «Քրիստոնէա-
կան Հաւատ, Յոյս և Սէր», յատուկ պետական միջնա-
կարգ դպրոցների IV և V-րդ դասարանների համար:

Դասագրքիս մէջ սակաւ բացառութեամբ չեմ
մտցրել վկայութիւններ, նա մանաւանդ գրաբար, մի-
անգամայն ազատ թողնելով պատուարժան կրօնուսոյց-
ներին ամէն անգամ ըստ իւրեանց նկատողութեան
յարմարաւոր կտորներ բերել Սուրբ գրքից և ըստ այսմ
բացատրել: Փորձով զիտեմ, որ վկայութիւնները ու-
սանող և ուսանողուհները չեն սովորում, այլ միայն
գրքի ստուարանալուն է ծառայում:

Թէ որքան է ինձ յաջողուել պոմէ մասամբ գիւ-
րացնելու ուսուցման եղանակը և թեթևացնելու աշա-
կերտ-աշակերտուհների աշխատանքը թողնում եմ այդ
կրօնուսոյց արժ. հայրերի բարեհայեցաղութեան, ամե-
նայն սիրով ուշագրութեան՝ առևելով նրանց աննշան
կարծիքն անգամ դասագրքիս վերաբերութեամբ:

Սոյն դասագիրքը կազմելիս իրը նիւթ աչքի ա-

ուած ունեցել եմ գլխաւորապէս հին և նոր կտակարանը, և գրեթէ բոլոր քրիստոնէական վարդապետութեան գասագրգերը, առաւելապէս «Մսերի» և Բէզնազարեանցի:

Նախ քան դասագրքիս Կրկրորդ տպագրութիւնը, մեծ հաճոյքով ընդունելով ոմանց կրօնուսոյց հայրերի այն կարծիքը, թէ այս գասագրքը իրքն երկու տարուայ դասընթաց համառօտ է իւր բովանդակութեամբ, տեղ-տեղ բարեփոխեցի և աւելացրի մի առանձին գըլուս «Եօթն մահացու մեղքեր և նրանց հակադիր առաքինութիւններ» վերնագրով իւրաքանչիւրի բարոյական կողմի համառօտ բացատրութիւնով։

Յ. ա. թ. Մ.

Իյանուշ կղմմայասոր թի-Ն և VI կղմմքողար քայլ նէց զնամնուածայ սպաս ՑԱ սիցցրասմ։ Այս զնամնուածայ բանաւուն ու զնամնութիւնացի բնյուն պատճենոցք մասեղուտուայ նոյնմորն առարա մշակարաւ մասնաւուապէտ ընդուցի ուց նարմա մին միջնմ նոյն ուց ս բնյու պրան լազմ ումիջնով զնայանշաւ ու զնամնութիւնացի ու նույն խնդրա յնդուացայ մամին Աս Առոյնուն մէջ զնամնութուաւու և բնաս

Առոյնուն Ն մայումայասու զնար ունասուն նոյն յնոյնին և մայդուն ՑՇ առաջ այժմբանամի և պրամար մահացուու այժմբան րւու նև և տուրուն զնամնուանուն զնամնութուաւունդ մասն մասնաւուրասմանն զնամնութիւնացի նոյն ընաւում ընայի խոյնուն մասնիւոյրաց և խոյն մասն ունաս մասն մասն նոյն մայդուն սիցներաք զնամնուար մում

նուոդուացայ զնամնամ ցըլ և զնուն ցնաւում մնի յնուոյն ցըլ ՑԱ միամնարման վնաւուն է ցըլն զգալորս մախամուդը և միմնաթիւնացադ ցըլն միամնալուայ յամնազաման ցըլ յնու Քրիստոնէական ՈՒՍՏԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱ-
ԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ։

Քրիստոնէական ուսումը կայանում է Քրիստոսին պաշտելու և նրա պատուիրանները կատարելու մէջ։ Այս ուսումը սովորելու համար ամէն մի հաւատացեալ պէտք է ըմբռնէ և ընդունէ այն բոլոր ճշմարտութիւնները, ինչ որ յայտնուած է մեզ U. Գրքի մէջ, Հաւատացեալ քրիստոնեան պէտք է ունենայ լուսաւոր, հաստատ և կենդանի հաւատ։

Հաւատը լուսաւոր է այն ժամանակ, երբոր հաւատի հետ ունի և գիտութիւն և գիտակցաբար կատարում է սուրբ Գրքում յայտնուած ճշմարտութիւնները։

Հաւատատ է այն ժամանակ, երբ նու հաւատարիմ է այդ ճշմարտութիւններին և աշխարհի ոչ մի հանգամանք չի կարող խախտել այդ հաւատը։

Կենդանի է հաւատը այն ժամանակ, երբ նրա հետ միանում է և բարի գործը։ Այսին Քրիստոնէական ուսման հիմքը կազմում էն

Հաւատը, Յոյսը և Սէրը: Հաւատը բացատրուածէ հաւատի հանգանակի մէջ, Յոյսը՝ Յիսուսի իններանութիւնների և Տէրունական աղօթքի մէջ, իսկ Սէրը՝ Տասնաբանեայ պատուիրանների մէջ:

ԱՍԾՈՒԾԱՑԻՆ ՅԱՅՑՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍԾՈՒԾԾԱՇՈՒՆՉ ՍՈՒՐԲ ԳԻՐՔ:

Աստուածային յայտնութիւն է կոչւում այն, ինչ որ Աստուած ինքը յայտնել է մարդկանց արժանաւոր անձանց միջոցով, սկսած մեր նախահայր Աղամից մինչև Մովսէս և այլ մարդաշերէրը: Վերջին ժամանակները նոյն յայտնութիւնը աւելի կատարեալ կերպով յայտնեց մեզ իւր միածին Որդին Յիսուս Քրիստոս և ապա Նրա առաքեալները, որ տարածեցին աշխարհի ամեն կողմէր բերանացի և գրաւոր:

Աստուածաշունչ սուրբ գիրք են կոչւում այն գրքերը, որոնց գրել են Ս. Հոգու շնորհքով Աստուածանից ընտրուած մարդիկ, որոնք են հին ուխտի մարդարէնները և նոր ուխտի առաքեալները:

Սուրբ գիրքը բաժանւում է երկու գլխաւոր մասի. — Հին կտակարան՝ որ գրուած է Քրիստոսից առաջ մարդարէնների ձեռքով, նոր կտակա-

րան՝ որ գրուած է առաքեալների ձեռքով Քրիստոսից յետոյ:

Հին կտակարանը յայտնում է մեզ Աստուածոյ խոստումը իւր Միածին Որդու աշխարհ գալու մասին, իսկ նորը՝ վկայում է, թէ ինչպէս Աստուած կատարեց իւր խոստումը և իւր միածին Որդուն ուղարկեց աշխարհ, մարդկանց ցոյց տալու փրկութեան ճանապարհը:

Հին և նոր կտակարանը իւրեանց բովանդակութեամբ բաժանւում են չորս կարգի. 1. Օրինադրական, որոնք հին ուխտի օրէնքների հիմն են կազմում: 2. Պատմական, որոնք պատմում են զանազան առաքինի և բարեպաշտ մարդկանց պատմութիւններ: 3. Բարոյական, որոնք սովորեցնում են կեանքի վերաբերեալ բարոյական կանոններ և հաւատի ուսման բացատրութիւններ. և 4. Մարդարէական, որոնք պատմում են զանազան մարդարէնների գուշակութիւններ, զլխաւորապէս Յիսուս Քրիստոսի մարդեղութեան վերաբերութեամբ:

Նոր կտակարանի առաջին գլուխը են՝ չորս աւետարանները, որ գրել են Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս աւետարանիչները: «Աւետարան» խօսքը առաջ է եկել աւետիս բա-

ոից և նշանակում է ուրախ լուր, որովհետև նա աւետում է մարդկութեանը Փրկչի երկրաւոր կեանքի և փրկութեան ուրախ լուրը:

Յիսուս Քրիստոսի համբարձումից ութ տարի յետոյ ամենից առաջ աւետարանը գրեց Մատթէոսը, հրէութիւնից դարձած քրիստոնեաների համար և այս պատճառով սկսում է Յիսուսի ազգաբանութիւնից, նկարագրելով մարդաբէների գուշակութիւնները, ցոյց տալու համար թէ նա է իսկապէս խոստացած Փրկիչը: Յետոյ գրեց Մարկոսը, 15 տարի յետոյ, մանրամասն նկարագրելով Յիսուսի հրաշագործութիւնները, հեթանոսութիւնից քրիստոնեայ դարձածներին աւելի ամրապնդելու իւրեանց հաւատի մէջ: Ղուկասը գրեց 17 տարի յետոյ Յիսուսի երկրաւոր կեանքի ամբողջ նկարագրութիւնը, իսկ Յովհաննէսը գրեց ամենից ուշ, համբարձումից 53 տարի յետոյ, բացատրելով քրիստոնէական եկեղեցու ապագայ վիճակի փառաւորութիւնը խորհրդաւոր կերպով և մարդաբէական հոգւով:

Հին կտակարանը իր մէջ պարունակում է քառասուն և հինգ (45) գիրք, նորը՝ քսան և եօթն (27), բոլորը միասին եօթանասուն և երկու (72) գիրք:

Հ նայածրադ յմանարման վայան յ Ս ովուարման մի և ովուարով այլդման
ԱՐԱՋԻՆ ՄԱՍՆ.

ՀԱԻԱՏԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ ԵՒ ՆՐԱ ԾԱԳՈՒՄԸ

Հաւատն է այն մեծ շնորհը, որով հաւատացեալը լնգունում է և հաւատում այն ամէն ճշշմարտութիւններին, որ Աստուած մեզ յայտնել է:

Հաւատի հանգանակը, որ է «Հաւատամքը», սուրբ գրքի համառօտ, բայց ճիշտ բովանդակութիւնն է, որի մէջ յայտնուած բոլոր ճշմարտութիւններին ամէն մի քրիստոնեայ պարտաւոր է հաւատալ:

Հաւատամքը գրուեց Փրկչի 325 թ. Նիկիա քաղաքում, ուր ժողովուելով քրիստոնեայ եկեղեցու 318 ներկայացուցիչ ամէն ազգի հայրապետներ, կազմեցին առաջին տիեզերական ժողովը, Այս ժողովին մեր եկեղեցու կողմից ներկայ էր ս. Գրիգոր Լուսաւորչի փոքր որդի Արքիստակէսը, ուր դատապարտեցին Աղէքսանդրացի Արիստ երէցին, որ ուրանում էր Քրիստոսի աստուածութիւնը և Որդին Աստուած չէր դաւանում հաւատար Հօրը, այլ մի լոկ արարած: Առն ժողովում սահմանեցին, որ Յիսուս Քրիստոս է ճշմարիտ Աստուած և Աստուծոյ Որդի և համագոյակից Հօր և Սուրբ Հոգուն:

Մեր հաւատի հանգանակը բաղկացած է տասնեւերկու յօդուածից և մի յաւելուածից:

Յօդ. 1. Հաւատամք՝ ի մի Աստուած՝ ի հայրն Ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի երեւելեաց և աներևոյթից:

Յօդ. 2. Հաւատամք և ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ՝ Հօրէ միածին, այսինքն յէռթենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն՝ ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղել յերկնս և ի վերայ երկրի՝ երևելիք և աներևոյթք:

Յօդ. 3. Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ՝ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս՝ ի Մարիամայ Սրբոյ կուսէն Հոգւովս Սրբով: Որով էառ զմարմին, զոգի և զմիտ և զամենայն որ ինչ է՝ ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօք:

Յօդ. 4. Չարչարեալ, խաչեալ և թաղեալ:

Յօդ. 5. Յերրորդ աւուր յարուցեալ:

Յօդ. 6. Ելեալ՝ ի յերկինս նովին մարմնովս՝ նստաւ ընդ աջմէ Հօր:

Յօդ. 7. Գալոց է նովին մարմնովս և փառօք Հօր, ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Յօդ. 8. Հաւատամք և ՚ի Ա. Հոգին, յանեղն

և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարդարէս և յաւետարանս: Որ էջն՝ ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալն և բնակեցաւ ՚ի սուրբսն:

Յօդ. 9. Հաւատամք և ՚ի միմիայն ընդհանրական և Առաքելական եկեղեցի:

Յօդ. 10. ՚ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց:

Յօդ. 11. ՚ի յարութիւնն մեռելոց:

Յօդ. 12. ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ՚ի կեանան յաւիտենականս:

Յաւելուած՝

Իսկ որք ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգի, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուզիկէ և Առաքելական սուրբ եկեղեցի:

Երբ ս. Արիստակէսը Ա. տիեզերական ժողովի վճիռը բերաւ իւր հօրը — Ս. Գրիգոր Լուսաւորչին, նա 326 թուին Վաղարշապատում ազգային ժողով գումարելով ընդունեց հաւատի հանգանակը և իրեն հաստատութիւն իւր կողմից աւելացրեց հետեւեալ խօսքերը.

«Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան

ըռւեցաւ կոստանդնուպօլսի տիեզերական Ա. ժողովը 381 թ.: Այս ժողովում ներկայ էին 150 հայրապետներ, որոնց թւում և մեր Մեծն ներսէս Հայրապետը: Մակեդոնը ուրանում էր Ս. Հոգու Աստուածութիւնը, ինչպէս որ Արքուսը ուրանում էր Քրիստոսի աստուածութիւնը: Ժողովը որոշեց դաւանել Ս. Հոգուն հաւասար անձն Հօր և Որդուն:

Երբորդ աղանդաւորն էր յոյն պատրիարք Նեստորը, որի դէմ գումարուեցաւ Եփեսոսի ժողովը 431 թ. 200 հայրապետների մասնակցութեամբ, ուր մեր Եկեղեցու կողմից ներկայ էին ս. Սահակ Պարթև հայրապետի փոխարքէն նրա աշակերտները: Նեստորը ուրանում էր Յիսուս Քրիստոսի Աստուծոյ Որդի և մարդու որդի լինելը, դաւանելով երկու քրիստոս, իսկ Մարքամ ս. Կոյսին մարդածին և ոչ աստուածածին: Ժողովը դատապարտեց Նեստորին և որոշեց դաւանել «մի Տէր Յիսուս Քրիստոս», իսկ Մարքամ ս. Կոյսին Աստուածածին:

Մեր Եկեղեցին ընդունում է միայն Երեք տիեզերական ս. ժողովներ. 1) Նիկոյ, 2) Կոստանդնուպօլսի և 3) Եփեսոսի առաջին ժողովները: Բացի սորանից ունեցել է և իւր Ազգային ժողովները, որ եղել է ամենայն Հայոց Հայրապետի հրաւերով:

ՀԱԻԱՏԱՄՔԻ Ա. ՅՈՒՈՒԱԾԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ.

Հաւատամք՝ ի մի Աստուած՝ ի հայրն ամենակալ և այլն:

Աստուծուն հաւատալ, նշանակում է հաւատալ Նրա գոյութեանը և զօրութեանը: Եթէ մեր հաւատը լինի դէպի Աստուած գիտակցաբար, այն ժամանակ, ոչ մի բան աշխարհիս երեսին չի կարող մեզ հեռացնել մեր հաւատից: Ճշմարիտ հաւատունեցողը պարտաւոր է իւր հաւատը բերանով ևս խոստավանել ամեն աեղ առանց վախենալու:

Երբ ասում ենք «Հաւատամք՝ ի մի Աստուած», զրանով խոստավանում ենք թէ երկնքի և երկրի Ստեղծող Աստուածը մէկ է, հերքում ենք բազմաստուածութիւնը: Եւ որովհետեւ Ստեղծող Աստուածը ժամանակով առաջ է բոլոր արարածներից, այս պատճառաւ չ'կայ մի արարած, որ հնարաւորութիւն ունենայ հասկանալ Աստուծոյ ինչ լինելը:

Սուրբ Գիրքը Աստուծոյն տալիս է զանազան անուններ, որոնք ցոյց են տալիս Աստուծոյ կատարելութիւնները: Սրանցից հաւատամքի մէջ յիշուած են «Ամենակալ» (Ամենակարող) և «Արարիչ» (ստեղծող) յատկութիւնները, իսկ միւս բոլոր անունները բղխում են յիշեալ երկու յատկութիւններից. այն է՝ անեղ, (չստեղծուած), ինքնագոյ (ինքն իրեն եղած), անսկիզբն (սկիզբ չունեցող), անվախճան (վերջ չունեցող) հոգի,

ամենազօր (ամենից զօրաւոր), ամենասուրբ (ամենից սուրբ), ամենուրեք (ամեն տեղ գտնւող) և այլն:

Թէպէտ Աստուած պարզ հոգի է, բայց սուրբ գիրքը տալիս է նրան այնպիսի անդամներ և զգայարանքներ, որպիսին ունենք մարդիկս. դրա պատճառն այն է, որ մենք կարողանանք հեշտութեամբ գաղափար կազմել Աստուծոյ մասին. օրինակ՝ Աստուծոյ սիրտ ասելով հասկանում ենք նրա բարութիւնը, ձեռք՝ նրա ամենակարողութիւնը, աչք՝ ամենատեսութիւնը և այլն:

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
Սուրբ գրքից գիտենք, որ Աստուած մէկ է և ունի երեք անձն, Հայր, Որդի և Սուրբ Հոգի. այս երեքը միասին կոչում են մի աստուածութիւն և սուրբ երրորդութիւն:

Նոր կտակարանը երրորդութեան գոյութեան մասին պարզ վկայութիւն է տալի: — Քրիստոս ասաց իւր աշակերտներին. «Գնացէք այսուհետեւ քարոզեցէք ամեն հեթանոսներին. մկրտեցէք նրանց Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով»: Նաև Յիսուս Քրիստոսի մկրտութեան ժամանակ երբ Ա. Հոգին աղաւնակերպ իջաւ նրա վրայ և Հայրը ձայն տուեց երկնքից ասելով «Դա է իմ ախրելի Որդին, դրան լսեցէք»: Այդ պիտով վկայեց երրորդութեան գոյութիւնը, ու

բովհետեւ Հայրը ձայն տուեց երկնքից, Որդին մկրտում էր, Հոգին իջաւ նրա վրայ:



Իսկ հին կտակարանի մէջ երրորդութեան մասին թէպէտ պարզ չէ յայտնած, բայց յիշուածներից հասկանալի է, որ այնտեղ ևս ե-



ըեք անձնաւորութեան մասին է խօսւում։ Օրինակ՝ «Արացուք մարդ ըստ պատկերի մերում»։ «Եկայք իջուք և խառնակեսցուք զլեզուս նոցա»։ Վերոյիշեալ յոգնակի բառերը «Արացուք, եկայք, իջուք և խառնակեսցուք, ակնարկում է երրորդութեան մասին»։

Աստուծոյ երեք անձինք միմեանցից զանազաննում են անունով — անձով, բայց բնութիւնով, զօրութիւնով և կամքով և ամենայն յատկութիւններով հաւասար են։ Հօրից ծնուռմ է Որդին, ինչպէս լոյսն արեգակից կամ խօսքը մտքից, իսկ Հոգին բղխում է Հօրից, ինչպէս ինքն Յիսուս ասաց. «Հոգին ճշմարտութեան, որի Հօրէ ելանէ, այսինքն ճշմարտութեան հոգին, որ Հօրից է բղխում»։

ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրբ գիրքը մեզ յայտնում է թէ սկզբում Աստուծ ստեղծեց երկինքն ու երկիրը, թէ երկիրը աներեսյթ էր և անպատճաստ և Աստուծ կարգի բերաւ նրանց վեց օրում։

Առաջին օրը ստեղծեց լոյսը, երկրորդ օրը՝ երկնային կամարը, կամ տեսանելի երկինքը։ Երրորդ օրը՝ ջրերը բաժանեց ցամաքից և ստեղծեց բոյսերը։ Չորրորդ օրը՝ երևեցը եց արեգակը, լուսինը և աստղերը։ Հինգերորդ օրը՝ ջրի մէջ

ապրող կենդանիները և օդի մէջ գտնուող թըռչունները։ Վեցերորդ օրը՝ բոլոր չորքոտանի կենդանիները և ամենից յետոյ ստեղծեց մարդուն։ Եօթներորդ օրը Աստուծ հանգստացաւ, սուռմ է սուրբ գիրքը և այդ օրը կոչուեց հանգստակամ Շաբաթ։ Աստուծոյ ստեղծած արարածների մէջ չ'կային սկզբում ոչ մի չար բան, այլ ամենն էլ բարի էին, ինչպէս որ սուրբ գիրքն էլ վկայում է «Եւ ետես Աստուծ զամենայն զոր արար և ահա բարի են յոյժ» (Աստուծ տեսաւ, որ այն ամէնը, ինչ որ ստեղծել է, բոլորն էլ շատ բարի են) Ծնն. Ա. 31։

Մարդուն ստեղծելիս Հայը խորհուրդ արար իւր Որդու և Սուրբ Հոգու հետ և ասաց. «Մեր պատկերի նման ստեղծենք մարդուն»։ Մարդուն ստեղծեց հողից և տուաւ նրան անմահ հոգի և ազատ կամք, որպէս զի մարդն իւր խելքով ու կամքով ուղենայ երջանկանայ, ուղենայ չ'երջանկանայ, այսինքն եթէ երջանիկ լինել կամենայ, թող պահէ Աստուծոյ պատուիրանները, իսկ եթէ չ'պահէ, իմանայ որ երջանիկ լինել չի կարող։ Մարդս Աստուծոյ պատկերն է իւր սրբութեամբ և անմեղութեամբ և ոչ մարմական պատկերով, որովհետեւ Աստուծ նիւթական կերպարանք չ'ունի։ Աստուծ մեր նախածնողներին զրաւ գրախտի մէջ, օրհնեց և ասաց. «Աճեցէք, բազմացէք, լցրէք երկիրը որդիներով և տէր եղէք եր-

կրին»: Ուստի մարդիկ ամէն ժամանակ պահելով Աստուծոյ պատուիրանները, պէտք է երջանիկ ապրէին, բայց Աղամ և Եւան չ'պահելով Աստուծոյ պատուէրը, զրկուեցին դրախտի կեանքից և Աստուծած բնակեցրեց նրանց դրախտից դուրս:

Բայց որովհետեւ մեր Արարիչը Ամենաքարի է, չուզեց, որ մարդ միշտ զրկուած լինի դրախտի կեանքից, խոստացաւ Փրկչին ուղարկել աշխարհ, որ բոլոր մարդկանց ազատէ մեղքից և դարձնէ մարդուն նորից Աստուծոյ պատկեր:

Ահա այս նպատակով Յիսուս Քրիստոս եւ կաւ աշխարհ և մեզ տուաւ օրէնք, որի պահպանութեամբ նորից ժառանգենք դրախտի կեանքը:

Հաւատամքի մէջ յիշուած «աներեւոյթ» խօսքը նշանակում է անտեսանելի, այն է հրեշտակները և մարդկանց հոգիները: Հրեշտակ՝ նշանակում է Աստուծոյ կամքը բերող և մարդկանց յայտնող, որի համար սուրբ զրքից ունինք շատ օրինակներ, ինչպէս Մարիամ Սուրբ կոյսի աւետաման ժամանակ և այն:

Մեր եկեղեցին հրեշտակներին տալիս է առնուններ. բոլորը ինն դասակարգ են և բաժանուած են բարի և չար հրեշտակներ: Բարի հրեշտակները ծառայում են Աստուծն և պահպանում են փորձանքներից բարի քրիստոնեաներին, իսկ չար հրեշտակները նրանք են, որոնք չ'նազանդուեցան Աստուծն, խաբեցին մեր նախածնողներին:

ԱՍՏՈՒԾՈՅ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆԸ

Աստուծոյ նախախնամութիւն ասելով պէտք է հասկանալ, որ Աստուծած աշխարհը ստեղծելուց յետոյ անինամ չ'թողեց, այլ պահպանում է բոյնը արարածների գոյութիւնը, ուղղելով նրանց դէպի բարին:

Առանց Աստուծային նախախնամութեան և հոգատարութեան անհնարին է, որ երկինքը և երկիրը մնային իւրեանց բարեկարգ դրութեան մէջ ստեղծուելու օրից մինչև այսօր:



ՀԱԽԱԽՆԱՄՔԻ Բ. ՅՈՒՅՍՈՒԹԻՒՆԸ

Հաւատամք և 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ. . . և այն:

Այս խօսքերով մենք հաւատում ենք թէ Ամենասուրբ երրորդութեան երկրորդ անձն է մի Տէր Յիսուս Քրիստոսը: Յիսուս անունը արուեց Նրան Գաբրիէլ հրեշտակապետից Նրա ծնուելուց առաջ: Իսկ Քրիստոս և Մեսսիա անուանեցին մարգարէները, երբ սպասում էին Նրա գալըստեան: Յիսուս նշանակում է Փրկիչ, որովհետեւ ծնուեց մարդկանց փրկելու համար, իսկ Քրիստոս յունարէն է և Մեսսիա երգերէն ու նշանակում է Օծեալ:



Հին ուխտի ժամանակ օծեալ էին կոչւում երբայեցւոց թագաւորները, մարդարէները և քահանաները, որովհետև այդ կոչումն ստանալիս օծւում էին իւղով: Քրիստոս երկրիս վրայ եղած ժամանակ կատարելով այդ պաշտօնները ևս, կոչուեցաւ Օծեալ:

Յիսուս Քրիստոսին սուրբ գիրքը անուանում է միածին, որովհետև Նա է միակ Աստուծոյ Որդին: Աստուծոյ Որդիք կոչւում են նաև Սուրբ և խաղաղաբար մարդկի, բայց ոչ իւրեանց գոյութեամբ, այլ սըբութեամբ:

Հաւատում ենք, որ Նա ծնուած է Հօր Աստուծուց, ինչպէս լոյսը լուսից, այն է ինչպէս արեգակի ճառագայթները արեգակից, թէ Նա ծշմարիտ Աստուած է ծնուած ծշմարիտ Աստուծուց, որ Նա ծնունդ է և ոչ ստեղծուած: Որ Հօր Աստուծոյ հետ ունի միենոյն գոյութիւնը և Աստուածային բոլոր յատկութիւնները և թէ ամենայն ինչ նրանով է ստեղծուած, ուրեմն և Նա է աշխարհի ստեղծողը:

Գ. ՅՈՒՅՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոց փրկութեան . . . և այն:

Սորանով հաւատում ենք թէ Աստուծոյ Որ-

դին իբրև պարզ Հոգի, իջաւ երկնքից և մեզ ե-
րկեցաւ մեր կերպարանքով մարդկային ազգը



փրկելու համար. թէ նա մարմին առաւ, այսինքն
մարդկային բնութիւն ստացաւ Մարիամ Ա. կոյ-

սից Սուրբ Հոգւոյ շնորհքով մեզ՝ մարդկանցս
սկզբնական մեղքից ազատելու համար, այն մեղ-
քից, որով բոլոր մարդիկ զբկուեցան յաւիտե-
նական երջանկութիւնից և Աստուածային շնորհ-
ներից:

Հաւատում ենք, որ Արդարադատ Աստուածը
թէպէտ պատժեց մեր նախածնողներին, բայց
միենոյն ժամանակ խոստացաւ ուղարկել աշխարհ
իւր Միածին Որդին, մեղքի բուն պատճառի գը-
լուխը ջախջախելու և մեզ ազատելու և նա ծը-
նուելով ստացաւ մարդկային մարմին, նոգի եւ
միտք, և մարդկային բոլոր յատկութիւնները բա-
ցի մեղքից, իսկապէս և ոչ կարծիքով։ Եւ մենք
կատարելապէս փրկուած կ'լինինք այն ժամա-
նակ, երբոր Նրա վարդապետութիւնը կընդու-
նենք ճշմարիտ հոգւով և մեր կեանքը կ'վարենք
Նրա համեմատ։

Հայաստանեայց եկեղեցին դաւանում է, որ
Յիսուս Քրիստոս ծնուելով Մարիամ Ա. Կոյսից
և առնելով մարդկային բնութիւն, եղաւ կատա-
րեալ մարդ իւր կատարեալ Աստուածութեամբ,
ընդունելով Նրա մէջ Աստուածային մի անձն,
մի գէմ և Աստուածային ու մարդկային բնու-
թիւնից անշփոթ և անխառն միաւորուած մի
բնութիւն։

Դ. ՅՈՒ. ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ բայ-
րմե մէս կանաչ այսաւա ըզգով մատանցքն

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ.

ՄԵՆՔ հաւատում ենք, որ Աստուծոյ Որդի
Յիսուս Քրիստոս, ճշմարիտ հաւատը մարդկանց
սովորեցնելուց յետոյ չարչարուեց, խաչուեց մեր
պատճառով, այսինքն թոյլ տուեց, որ հրէայ ժո-
ղովուրդը նրան խաչի վրայ բարձրացնէ և նա
մեռաւ ու թաղուեց այդպիսի մի անարդ մահով
Հրէից ծերերի և դպիրների ստութիւններն ու
անօրէն կենցաղավարութիւնը յանդիմանելու հա-
մար, որպէս զի մարդկանց ազատէ յաւիտենա-
կան պատժից:

Հաւատում ենք, որ Յիսուս Քրիստոս չար-
չարուեց, խաչուեց և թաղուեց ոչ Աստուծու-
թեամբ, այլ իրեն մարդ, որովհետեւ նա իրին
Աստուած անմահ է և անչարչարելի:

Յիսուս Քրիստոսի մահուան և թաղման
սուրբ յիշատակը յարգելու համար՝ նրան հաւա-
տացողներս կարող ենք մասնակից լինել նորան
միմիայն մեր կենդանի հաւատով, քրիստոնէա-
կան սուրբ եկեղեցու որբարար խորհուրդների
արժանաւոր ընդունելութեամբ և միևնույն ժա-
մանակ կատարելով մեզ աւանդած սիրոյ պա-
տուիրանները:

Ե. ՅՈՒ. ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Յերբորդ աւուր յարուցեալ.

Հաւատում ենք, թէ Աստուծոյ Որդին Յի-
սուս Քրիստոս մարդկային բնութիւնով մեռնե-
լուց յետոյ, սուրբ գրքի վկայութեան և մարգա-
րէների գուշակութեան համաձայն, մահուան եր-
րորդ օրը յարութիւն առաւ և այդ յարութիւնով
ապացոյց տուաւ մեզ մեր ապագայ յարութեան:

Յիսուսի յարութիւնը կմացուեց շաբաթ ե-
րեկոյեան լոյս կիրակի, ինչպէս որ Մատթէոս
աւետարանիչը վկայում է «Շաբաթ երեկոյին,
երբ լուսանում էր կիրակի կամ միաշաբաթ, Մա-
րիամ Մագդաղինացին և միւս Մարիամն եկան
գերեզմաննը տեսնելու»:

Շաբաթ երեկոյեանը կատարում ենք Քրիս-
տոսի յարութեան տօնինախատօնակը: Դրա պատ-
ճառն այն է, որ Հայաստանեայց եկեղեցին օ-
րուան սկիզբը հաշւում է երեկոյից և ամէն մի
յայանի տօների ժամանակ նախընթաց երեկոյին
կատարում է նախատօնակ:

Հաւատում ենք, որ Յիսուս Քրիստոս յա-
րութիւնից յետոյ քառասուն օր մասց երկրիս
վրայ, երևաց իւր մի քանի աշակերտներին և
ուրիշ հաւատացեալներին, քարոզելով նրանց իւր
վարդապետութիւնը, և աւելի ևս հաստատելու
նրանց իրենց հաւատի մէջ:

Հ. Յ07. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ելեալ յերկինս նովին մարմնովն և նստաւ ընդաշմէ Հօր:

Հաւատում ենք, որ Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս իւր յարութեան քառասներորդ օրը բարձրանալով Զիթենեաց սարը, ձեռք գնելով աշխարհաբաների գլխին, օրհնեց նրանց և համբարձաւ երկինքը մարդկային մարմնով և նստեց Հօր Աստուծոյ աջ կողմը: Սորանով հաւատում ենք, որ Յիսուս Քրիստոս ունի Աստուծոյ հետ հաւասար գորութիւն, պատիւ և փառք:

Է. Յ07. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատում ենք, որ Աստուծոյ Որդին կրկին անգամ գալու է նոյն մարմնով և Հօր Աստուծոյ փառքով դատելու արդարներին և մեղաւորներին: Այս դատաստանը պէտք է լինի միանգամայն արդար, ինչպէս ինքն է ասում «դատաստանն իմ արդար է» և այն ժամանակ պէտք է հատուցանէ ամէն մէկին իւր գործերի համեմատ: Վերջին դատաստանի օրը Աստուծած չ'յայտ-

նեց մեզ, որպէս զի ամեն ժամանակ պատրաստ լինինք հաշիւ տալու մեր ամեն մի հասարակ գործերի համար: Յիսուսի երկրորդ գալուստը բոլորովին նման չէ լինելու առաջինին. առաջ նա եկաւ աշխարհ խոնարհ և աղքատիկ կերպարանքով, իսկ երկրորդ անգամ կ'գայ Հօր փառքով, երկնային գօրութեամբ և հրեշտակների սպասաւորութեամբ:

Հաւատում ենք նոյնպէս, որ Յիսուսի թագաւորութեանը վախճան չկայ:

Հ. Յ07. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Հաւատամք և ՚ի Սուրբ Հոգին . . . և այլն:

Հաւատում ենք Սուրբ Հոգուն, որ Նա Ամենասուրբ երրորդութեան երրորդ անձն է, Որին դաւանում ենք իրեկ ճշմարիտ Աստուծ, հաւատում ենք, որ Ս. Հոգին ունենալով Հօր և Որդւոյ հետ հաւասար պատիւ և փառք, տալիս է արարածներին կենդանութիւն և հաւատացեալներին հոգևոր կեանք:

Հայաստանեաց եկեղեցին հաւատում է, որ Ս. Հոգին բղիսում է միմիայն Հօրից, ինչպէս ասում է Ինքն Յիսուս «Հոգին ճշմարտութեան, որ ՚ի Հօրէ ելանէ, Նա վկայեսէ վասն իմ». (Ճշմարտութեան Հոգին, որ Հօրիցն է բղիսում, նա իմ մասին կ'վկայէ):

Հաւատում ենք, որ մարդարէները և առաջքեալները Աստուծոյ կամքը մարդկանց յայտնելու և Սուրբ գիրքը գրելու ժամանակ Սուրբ Հոգու աղդեցութեամբ և ներշնչմամբ էին խօսում և գրում։ Հաւատում ենք, թէ երբ Յիսուս Քրիստոս մկրտում էր Յորդանան գետի մէջ, Ս. Հոգին իջաւ Նրա վրայ աղաւնու կերպարանքով և վկայեց թէ Քրիստոս ուղարկուած է Հօրից, նոյնպէս Յիսուսի յարութեան յիսուներորդ օրը Հրէից Պենտէկոստէի տօնին հրեղէն լեզուների ձկով իջաւ աշակերտների վրայ, որոնց հետ էր և Ս. Կոյս Մարիամ Աստուածածինը վերնատան մէջ և առաքեալները ստացան շնորհ և կարողութիւն խօսելու այլ և այլ լեզուներ և քարոզելու Աստուծոյ աւետարանը։

Մենք ևս Սուրբ Հոգու շնորհը կարող ենք ստանալ եկեղեցու սուրբ խորհուրդների միջոցով, ջերմեռանդ և ձշմարիտ աստուածպաշտութեամբ և նաև Աստուծոյն մաքուր և խոնարհ սրտից բղխած աղօթքներով, հաւատալով, որ Ս. Հոգին բնակլում է սուրբ մարդկանց մէջ։

Թ. ՅՕՒ. ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Հաւատամք և 'ի միմիայն, ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցի։

Հաւատում ենք եկեղեցուն, Որի գլուխը և հիմնադիրն է մեր Տէր Յիսուս Քրիստոսը։

Եկեղեցի նշանակում է հաւատացեալների ժողով, որի անդամները իրար հետ միացած են ձշմարիտ հաւատով, յոյսով և սիրով։

Քրիստոնէական եկեղեցին բաժանւում է երկուսի, այն է՝ տեսանելի և անտեսանելի։ Տեսանելին անւանւում է նաև զինուորեալ եկեղեցի, իսկ անտեսանելին յաղթանակող։ Կենդանի հաւատացեալները զինուորեալ եկեղեցի այն պատճառով են կոչւում, որ աշխարհիս վրայ ձշմարիտ հաւատով և առաքինի գործերով կուում են ամէն տեսակ չարութեանց դէմ և յաղթում են։ Իսկ հաւատացեալ ննջեցեալների հոգիները կենդանի ժամանակ բարւոք պատերազմը պատերազմէլուց յետոյ կազմում են փառքի պատկի արժանի յաղթանակող եկեղեցի։

Զինուորեալ եկեղեցին գարծեալ բաժանւում է՝ սովորեցնող, որ բոլոր հոգեորականներն են, սկսած առաքեալներից և սովորող՝ որ հաւատացեալ ժողովուրդն է։

Եկեղեցի է կոչւում նաև Աստուծոյ տունը կամ Տաճարը, ուր հաւատացեալները կատարում են իւրեանց աստուածպաշտութիւնը։ Ուստի և նիւթական Տաճարը, որ ընդունում է միշտ իւր մէջ հաւատացեալ ժողովրդին, նրա անունով փոխարերաբար ստացել է «եկեղեցի» անունը։

Հաւատում ենք, որ Քրիստոնէական եկեղեցին ունի հետևեալ չորս յատկութիւնը՝ մի, սուրբ, ընդհանրական և առաքելական։

Եկեղեցին մի է ասւում նրա համար, որ թէպէտ Քրիստոսի հաւատացեալները ազգով, լեզով և ծէսերով զանազանւում են միմեանցից, սակայն ունին մի գլուխ և մի հիմնագիր, որ է Յիսուս Քրիստոս։

Սուրբ է Քրիստոսի Եկեղեցին նրա համար, որ իւր հիմնագիր Յիսուս Քրիստոս, իւր արիւնով, նա և մկրտութեան սուրբ Խորհրդով սրբեց հաւատացեալներին սկզբնական մեղքից, տալով միջոց ազատելու նաև ներգործական մեղքից Եկեղեցու միւս սրբարար Խորհրդները ընդունելով։

Եկեղեցին ընդհանրական է կոչում նրա համար, որ ընդունում է իւր ծոցի մէջ սուրբ աւազանի մկրտութեամբ վերածնուած բոլոր հաւատացեալներին առանց խտրութեան ազգութեան և սեռի։

Առաքելական է կոչում նրա համար, որովհետեւ Քրիստոսի Եկեղեցին հաստատուած է Առաքեալների Հանքերով և նրանց յաջորդների քարոզութիւնով և ուղղագիտ հաւատով։

Ճ. ՅՈՒ. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Հաւատամք ՚ի մի մկրտութիւն, յապաշտարութիւն, ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց։ Հաւատում ենք Եկեղեցու խորհրդներին, որոնց արժանաւոր կերպով ընդունող հաւատացեալը ստանում է Աստուածային շնորհը աներևոյթ կերպով։

ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒԹԻՒՆԵՐԸ

Եկեղեցու խորհրդները եօթն են՝
1. Մկրտութիւն, 2. Դրոշ, 3. Ապաշխարութիւն, 4. Հաղորդութիւն, 5. Ամուսնութիւն կամ Պատ, 6. Կարգ կամ Զեռնադրութիւն և
7. Օծումն հիւանդաց։

1. Մկրտութիւն.

Մկրտութիւնը Եկեղեցու եօթն Խորհրդներից մինն է, որ հաւատացեալը ընդունելով Հօր, Որու և Սուրբ Հոգու անունով, ստանում է Սուրբ Հոգու շնորհքը, վերածնում է աւազանի միջոցով, ազատուում է սկզբնական մեղքից և մտնում է նոր հոգեոր կեանքի մէջ։

Մկրտութեան սուրբ Խորհրդնեց սահմանեց մեր Տէր Յիսուս Քրիստոսը նախ ինքը մկրտուելով Յորդանան գետում, Երկրորդ պատուիրելով

աշակերտներին ասաց. «Գնացէք և բոլոր հեթանոսներին մկրտեցէք Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով»:

Մկրտութիւնը կատարում են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները, երեք անգամ ընկղմելով երեխային աւագանի մէջ սուրբ երրորդութեան անունով. առաջին անգամ ընկղմում է և ասում. յանուն Հօր, երկրորդ անգամ և Որդւոյ, երրորդ անգամ և Հոգւոյն սրբոյ: Երեխային ջրի մէջ երեք անգամ ընկղմելը նշանակում է Յիսուսի երեք օրուայ թաղումն ու յարութիւնը, որը և համարւում է մկրտութեան արտաքին ծէսը:

Մկրտութեան ժամանակ երեխան ունենում է կնքահայր իբրև նրա երաշխաւոր, որը պարտաւորւում է իւր սանիկին դաստիարակել քրիստոնէական հաւատով, ինչպէս այդ լինում էր քրիստոնէութեան առաջին դարերում:

Մկրտութեան խորհուրդը չէ կրկնւում. այն է որ մի անգամ մկրտուածին երկրորդ անգամ չի կարելի մկրտել, որովհետև Յիսուս Քրիստոս մի անգամ մկրտուեց և դրա համար էլ Հաւատամքի մէջ ասուած է «Հաւատամք՝ի մի մկրտութիւն»:

Չեն կրկնւում նաև Դրոշմի և Կարգի խորհուրդները, որովհետև Աստուածային շնորհը, որ հաւատացեալը ստանում է այդ խորհուրդների միջոցով, անջնջելի են նրա սրտի և հոգու մէջ:

Քրիստոնէութեան նախնի հալածանքի դարեւում նահատակներից ու սուրբերից ոմանք թէպէտե չ'մկրտուած, բայց իւրեանց մահով վկայելով Յիսուսի Աստուածութիւնը, մկրտուեցին թափելով իւրեանց արիւնը քրիստոնէական հաւատի համար, որնք և կոչւում են սիրով և արիւնով մկրտուածներ:

2. Դ Ր Ո Հ Մ.

Դրոշմը եկեղեցու խորհուրդ է և քրիստոնէական հաւատի կնիքը, որով նոր մկրտուածը ընդունում է Սուրբ Հոգու շնորհը, հաստատում է քրիստոնէական կեանքի մէջ և ոյժ է ստանում կատարելու քրիստոնէական հաւատի պատուիրանները: Դրոշմի խորհուրդը հաստատեց Ս. Հոգին նախ իջնելով Յիսուսի վրայ Յորդանան գետում մկրտութեան ժամանակ և երկրորդ՝ Առաքեալների վրայ երաւաղէմում վերնատանը Հոգեգալստեան օրը:

Այս խորհուրդը Առաքեալները կատարում էին ձեռք դնելով մկրտուածի զիսին, որով աներևութապէս նրա վրայ իջնում էր Ս. Հոգու շնորհը: Մեր եկեղեցին այս խորհուրդը կատարում է անմիջապէս մկրտութիւնից յետոյ:

Քահանան սուրբ միւսոնով օծում է մկրտուածի ճակատը, աչքերը, ականջները, հոտո-

րիս վրայ կներէք, նա ներուած կ'թնի երկնքումը, եթէ կ'կապէք, կապուած կ'լինի»։ Սորանով Յիսուս Քրիստոս հաստատեց ապաշխարութեան խորհուրդը։

Եթէ քրիստոնեան իւր մեղքերը անթերի զղալով խոստովանում է քահանային, վերջինս դառնում է նրա և Աստուծոյ մէջ միջնորդ, բըժիշկ նրա հոգու և գատաւոր նրա խղճի։ Ապաշխարութեան խորհուրդը՝ կոչւում է խոստովանութիւն։

Պատմական գործության մասին չույց ու վկացքություն ունենալու հարաբեր ամենա

գաղտնաբառ մատանից այլ և մայթուր

զգման մասունք բամանակ յրազատով ։

4. Հաղորդութիւն։

Խորիս այս վայրության և նախառայի զարգացման համար հաղորդութիւնը եկեղեցու այն խորհուրդն է, որին հաւատացողը հացի և գինու տեսակով ճաշակում է Քրիստոսի ճշմարիտ մարմինը ու արինը։ Այս խորհուրդը սահմանեց Քրիստոս իւր չարչարանքից առաջ, Աւագ հինգշաբթիօրը Պատեքի տօնին իւր աշակերտների հետ զատկական գառը ուտելիս։

Յիսուս վերցրեց բաղարջ հացը, օրհնեց,

տուեց աշակերտներին և ասաց. «Առէք, կերէք,

այս է մարմին իմ»։ Եւ ապա առնելով բաժակը,

օրհնեց, տուեց աշակերտներին և ասաց «Արբէք

ի սմանէ ամենեքեան, այս է արին իմ» պա-

տելիքը, բերանը, ձեռքերը, սիրտը, մէջքը և ոտները և ամէն մի զգայարան խաչանիշ կնքելով, արտասանում է դրոշմի էտական խօսքերը, այն է՝ «կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի»։

Սուրբ միւռոնը օրհնուում է Ս. էջմիածնուում մեծ հանդէսով ամենայն Հայոց Հայրապետից և այնտեղից բաժանուում է Հայոց բոլոր եկեղեցիներին։

3. Ապաշխարութիւն

Ապաշխարութիւնը եկեղեցու խորհուրդն է, որով հաւատացեալը խոստովանելով իւր մեղքերը քահանայի առաջ և նրանից ընդունելով թողութիւն, ստանում է իւր ունեցած հաւատի համեմատ ներսում իւր գործած մեղքերից Ս. Հոգու շնորհքով։

Եկեղեցին ապաշխարող հաւատացեալից պահանջում է բոլոր մեղքերի սրտանց զղջումն, հրաժարուելով ամենտեսակ անվայել և յանցաւոր գործերից։ Ապա քահանան նայելով նրա յանցանքին, կամ ենթարկում է ապաշխարութեան, պարտաւորեցնելով սրտանց զղջալու իւր յանցանքը և մաքրելու իւր խիղճը և կամ արձակում է մեղքերից՝ կրկնելով Յիսուսի խօսքերը, որով Առաքեալներին իրաւունք տուեց մարդկանց մեղքերը ներելու, ասելով. «Եթէ դուք մէկին երկ-

տուէր տալով, որ այս խորհուրդը կատարեն միշտ իւր յիշատակի համար:

Հաղորդութեան արտաքին ձեր, որով կատարուում է այս խորհուրդը, կոչում է պատարագ, որ նշանակում է զոհ: Տեղը, ուր մատուցանուում է ս. պատարագը, կոչում է սեղան, որի վրայ հաստատուած է օծեալ վէմը:

Հաղորդութիւն նշանակում է մասնակցութիւն կամ միաւորութիւն և մենք ճաշակելով Տիրոջ մարմինն ու արիւնը, միանում ենք նրանետ հոգւով, ստանում ենք մեր մեղքերի թողութիւն և յաւիտենական կեանք:

Ս. Պատարագի ժամանակ քրիստոնեաները յիշում են Փրկչի երկրաւոր կեանքը, որ սովորաբար կատարուում է ճաշից առաջ, շատ անգամ առաւտեան ժամերգութեան կից: Իսկ Ծննդեան և Յարութեան ճրագալոյցներին երեկոյեան ժամից յետոյ:

Քրիստոնէութեան նախնի դարերում պատարագը կատարուում էր երեկոյեան:

Պատարագը մատուցանում է քահանան և նրանից բարձր կարգաւոր պաշտօնեաները: Պատարագել կարելի է ամենայն օր, բայց Առաջաւորաց պասի առաջին հինգ և մեծ պասի լի օրերից:

Հաղորդութեան խորհուրդը կրկնում է: և իւրաքանչիւր քրիստոնեայ պատաւոր է հինգ

նաւակատեաց տօներին կամ գոնէ տարին մի անգամ անպատճառ հաղորդուել:

Հաղորդութեան նիւթն է բաղարջ հացը և խաղողի անարատ գինին, որոնք նախ՝ որ Յիսուս Քրիստոսի անարատ մարմնի և արեան նշանակութիւնը ունին և երկրորդ՝ որ Յիսուս հաղորդութեան խորհուրդը հաստատեց բաղարջակերաց (պասեքի) տօնին, ընթրիքին, և ընթրիքի հացը զուտ անխմոր հաց էր, իսկ գինոյ մասին արդէն ինքը Փրկչից իւր խօսքերի մէջ յլշել է «ի բերոյ որթոյ», այն է որթի բերքից և որթի բերքը, այն է խաղողը տալիս է անարատ գինի և ոչ ջրախառն:

Հաղորդութեան խորհրդի էական խօսքերն են «Առէք, կերէք, այս է մարմին իմ» և «Արբեք ՚ի սմանէ, այս է արիւն իմ»:

5. Ամուսնութիւն կամ զսակ:

Ամուսնութիւնը կամ պսակը եկեղեցու սուրբ խորհուրդներից մինն է, որով Քրիստոսի եկեղեցին օրհնում է ամուսնական միաւորութիւնը և խնդրում է Աստուծուց այր և կնոջ համար Աստուծային շնորհ:

Ամուսնութիւնը սահմանեց Արարիչ Աս-

տուած դրախտի մէջ մեր նախածնողների ժամանակ, երբ նրանց օրհնեց ու ասաց. «Աճեցէք և բազմացէք», իսկ Յիսուս Քրիստոս այս միաւորութիւնը կըկին հաստատելով ասաց. «Որին Աստուած միաւորեց, մարդը չի կարող բաժանել», որով որոշակի կերպով յայտնեց թէ ամուսինները ցմահ պէտք է լինին անբաժան:

Եկեղեցու այս մեծ խորհրդով փեսան ու հարս գնալով Եկեղեցի, ազատ կերպով յայտնում են քահանային իւրեանց հաւանութիւնը և քահանայի օրհնութեամբ պատկուելով, ուխտում են միմեանց հաւատարմութիւն և անկեղծ ոէր, նաև մեծացնել զաւակներ քրիստոնէական հոգւով, որը և համարւում է բուն նպատակը պմուսնութեան խորհրդի:

Պատկի էական խօսքերն են «Առեալ զձեռն եւայի, տուեալ ՚ի յաջն Աղամայ», իսկ արտաքին ձեն է միմեանց ձեռք տալը, որը նշան է նրանց ներքին բարոյական միութեան:

Եւ որովհետեւ Փրկիչը ամուսնութեան հիմքը հաստատեց սիրոյ և հաւատարմութեան վրայ, այս պատճառաւ Առաքեալը մարդու և կնոջ միաւորութիւնը նմանեցնում է Քրիստոսի միաւորութեան իւր Եկեղեցու հետ: Եւ երբ այրն իւր կնոջ կ'սիրէ իւր անձի պէս, իսկ կինը փոխադարձաբար սիրուց շարժուած հնազանդ կ'լինի նրան, արդարեւ այդպիսի ամուսինների մէջ կ'թա-

գաւորէ երջանիկ կեանք: Մեր Եկեղեցին ամուսնութեան առաջին, երկրորդ և երրորդ պատակը համարում է օրինաւոր, իսկ չորրորդը համարում է անկանոն և ապօրինի:

Պատուի այլ պատճեններ ու նույան

6. Կարգ կամ Զեռնաղբութիւն և այլ գծադրութեան մեջ զնացած պատճեններ և զարդարութիւն

Կարգը կամ ձեռնաղբութիւնը Եկեղեցու խորհուրդներից մինն է, որով եպիսկոպոսը ձեռնաղբութիւնով տալիս է արժանաւորին իշխանութիւն հովուելու Քրիստոսի հօտը և կատարելու Եկեղեցու սուրբ խորհուրդները:

Զեռնաղբութեան խորհուրդը սահմանեց մեր Տէր Յիսուս Քրիստոսը, երբ Զիթենեաց սարի վրայ բարձրացնելով ձեռքերը, օրհնեց աշակերտներին և տուեց նրանց իրաւունք օրհնելու և իւրեանց համար յաջորդներ և օգնականներ ձեռնադրելու Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

Հայաստանեաց Եկեղեցին այս խորհուրդը տալիս է նրանց, որոնք ունին համապատասխան ուսում, իւրեանց բարի վարքով օրինակ են հաւատացեալներին, կատարելահասակ են, չ'ունին որ և է մարմնական պակասութիւն և ընտրուած են ժողովրդից:

Կարգը ունի եօթն աստիճան՝ դռնապահու-

թիւն, դպրութիւն, երգմնեցուցչութիւն, ջահընկալութիւն, կիսասարկաւագութիւն, սարկաւագութիւն և քահանայութիւն:

Սրանցից առաջին հինգը ստացողները աճամարւում են դպիրներ, իսկ վերջին երկուսը սրբազնագործ պաշտօնեաներ:

Եպիսկոպոսը և կաթողիկոսը իւրեանց կարգով քահանայ են, բայց քահանայից բարձր են պաշտօնով և իշխանութիւնով—քահանայապետ:

Կարգի աստիճանները տալիս է եպիսկոպոսը առաջին հինգը աղօթքով, վեցերորդը ձեռք դնելով նորնծայի գլխին, իսկ եօթներորդը ձեռք դնելով և սուրբ միւռոնով օծելով:

Քահանայի պաշտօնն է հովուել ժողովուրդ և կատարել սուրբ խորհուրդները բացի կարգից և ձեռնագրութեան խորհրդից: Եպիսկոպոսի պաշտօնն է ձեռնագրել քահանայ, լինել վիճակի առաջնորդ, բարեկարգել եկեղեցիքը և եկեղեցականները:

Կաթողիկոսը եկեղեցու պետն է, կաթողիկոսի իրաւունքն է ձեռնադրել եպիսկոպոս, օրհնել սուրբ միւռոն, գրել եկեղեցական կանոններ և կառավարել եկեղեցին իբրև յաջորդ Ս. Թագէոս և Բարդուղիմէոս առաքեալների և Ս. Գրիգոր Լուսաւորչի:

Հայաստանեաց եկեղեցու բոլոր պաշտօնեաները ընտրում են ժողովրդից, սկսած ստորին

պաշտօնեայից մինչեւ կաթուղիկոս կաթուղիկոսը օծւում է Ա. Ա. էջմիածնում 12 եպիսկոպոսներից:

7. Օծումն հիւանդաց

Այս խորհրդով արւում է հաւատացեալներին սուրբ Հոգու շնորհը, որով համաձայն իւր հաւատի՝ հիւանդն ստանում է Աստուծուց մարմնի առողջութիւն և ներելի մեղքերի թողութիւն,

Խորհրդի սահմանողն է Յիսուս Քրիստոս, Որը այցելեց հիւանդներին և իրաւունք տուեց առաքեալներին բժշկելու ամէն տեսակ հիւանդներին ասելով «Հիւանդներին բժշկեցէք, գեերին հանէք և այն.»:

Թէպէտ Յակոբոս առաքեալից սահմանուածէ, որ այս խորհուրդը քահանան պէտք է կատարէ հիւանդի վրայ ձեռք դնելով և իւղով օծելով, այն է աղօթքն և օծումն կատարել միաժամանակ, բայց որովհետև նոյն առաքեալի խօսքերից և Սարգիս Շնորհալու մեկնութիւնից երեւում է, որ խորհրդի էական մասը կազմում են հաւատն եւ աղօթքն և ոչ թէ օրհնած իւղը, Հայոց եկեղեցին թողնելով իւղի գործածութիւնը, սահմանեց կատարել հետեւեալ կարգով:

Քահանան խաչով և աւետարանով զնում է հիւանդի մօտ, կարդում է սահմանուած բժըշ-

կութեան աւետարան և աղօթքներ և ապա հիւ-
ւանդը սրտի զղջումով խոստովանելով իւր մեղ-
քերը, արժանանում է ճաշակել Փռկչի կենարար
Մարմինը և Արիւնը:

ԺԱ. ՅՈՒ. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Հաւատամք՝ 'ի յարութիւն մեռելոց:

Յարութիւն մեռելոց ասելով հաւատում ենք,
որ աշխարհի վերջը կամ վերջին դատաստանի
օրը Աստուծոյ ամենակարող հրամանով բոլոր
մեռած մարդկանց մարմինները պէտք է միա-
նան իւրեանց հոգիների հետ և կենդանի մնա-
ցածների հետ միասին դատուեն Քրիստոսից,
ուր ամէն մինը պէտք է ստանայ իւր վարձը:

Մեռելների յարութիւնը Պօղոս առաքեալը
նմանեցնում է ցանած հատիկին, որ առաջ հողի
մէջ փոռում է, յետոյ կենդանանում և սրա հա-
մար ասում է «Դու որ ցանում ես, նա չի կա-
րող կենդանանալ, եթէ որ առաջ չ'մեռնի»:

ԺԲ. ՅՈՒ. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Հաւատամք՝ 'ի դատաստանն յաւիտենից հոգ-
ւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և 'ի
կեանսն յաւիտենականա:

Այս խօսքերով հաւատում ենք, որ այս երկ-
րաւոր կեանքից յետոյ կայ ուրիշ յաւիտենական
կեանք, որ լինելու է մեռելների յարութիւնից
և վերջին դատաստանից յետոյ:

Այս կեանքը սուրբ գրքի վկայութեան հա-
մաձայն մի անպատմելի երանութիւն է, որ ար-
դարները պէտք է վայելեն աեսնելով Ամենակա-
րող Աստուծոյ փառքը, որ նրանց հոգիները յա-
ւիտենական հանգստութեան և խղճի անդորրու-
թեան մէջ պէտք է գտնուին:

Այս անպատմելի երանութիւնը, որին Ա.
Գիրքը «արքայութիւն» անունն է տալիս, յարու-
թիւն առնողները պէտք է վայելեն ոչ հաւասար
չափով, այլ ամեն մէկը իւրեանց երկրաւոր կեան-
քի ընթացքում կատարած գործերի համեմատու-

իսկ անօրէններն ու մեղաւորները պէտք է
դատապարտուեն յաւիտենական տանջանքի, ու-
րին Սուրբ Գիրքը «դժոխք» անունն է տալի, ուր
նրանք իւրեանց խղճի խայթից յաւիտեան պէտք
է տանջուին:

Իսկ անօրէններն ու մեղաւորները պէտք է
դատապարտուեն յաւիտենական տանջանքի, ու-
րին Սուրբ Գիրքը «դժոխք» անունն է տալի, ուր
նրանք իւրեանց խղճի խայթից յաւիտեան պէտք
է տանջուին:

թիվ սկս զու զամբանա՞ խոյժասայ այլ
մատուցմադայ զիկը լոր լուսէ պահանձի զուակ
ըմբաժնայա միջամտն և առյամի զու գանձք

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ.

ՔՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆ ՅՈՅՑՈՒՄԸ ԱՅԼ

ՔՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆ յոյշն Աստուծուց պարզեւած
այն մեծ շնորհն է, որով հաւատացեալները
հաստատապէս սպասում են ստանալու Աստուծանից խոստացած բարիքը, այն է ճամփիստ ու
յաւիտենական երջանիկ կեանք:

Աստուծած իւր խոստմունքը յայտնեց մարդկանց նախ՝ սուրբ մարդարէների միջոցով և յետոյ վերջին ժամանակները յայտնեց իւր միածին Որդի Յիսուս Քրիստոսը, երբ Սա իւր երկրաւոր կեանքի ընթացքում սովորեցրեց մարդկանց բարոյական պատուիրանները, որ կոչում է «Յիսուսի ինն երանութիւններ» և «Տէրունական» կոչուած աղօթքը, որով սովորեցրեց մեզ մօտենալ Աստուծոյն և խնդրել նրանից այն բոլորը, ինչ որ մեզ հարկաւոր է: Ուստի Քրիստոնէկան Յոյսը մանրամասն կերպով բացատրում է Տէրունական աղօթքի և ինն երանութիւնների մէջ:

Ա Ղ Օ Թ Ք

Աղօթել նշանակում է Աստուծոյ հետ խօսել, որով կարողանում ենք մօտենալ Աստուծուն և հաւատատուել մեր ճշմարիտ հաւատի և յոյսի մէջ:

Աղօթքով հաւատացեալը դիմելով Աստուծուն, խնդրում է հոգեոր և մարմնաւոր բարիքներ, ինչ որ հարկաւոր է իրեն, չնորհակալութիւն է յայտնում ստացած բարիքների համար և օրհնում ու փառաբանում է Նրա սուրբ անունը:

Աղօթքի սահմանողն է Յիսուս Քրիստոս, որ կատարում է երկու տեսակ, առանձնակի և հրապարակական, որոնց մասին ունինք պատուէր: Առաջինի համար Յիսուս Քրիստոս պատուիրում է «Մտիր սենեակդ, փակիր դուռը և ծածուկ աղօթիք. . . . , իսկ երկրորդի համար սաղմոսի մէջ ասուած է «Նրա (Աստուծոյ) տաճարի մէջ, ամէնքը պարտաւոր են նրան (Աստուծոյն) փառաբանել»: Ուրեմն առանձնականն այն է, երբ մի կամ մի քանի հոգի առանձնապէս աղօթում են, իսկ հրապարակականը՝ երբ բոլոր հաւատացեալները Աստուծոյ տաճարի մէջ ժողովւում են, աղօթում և փառաբանում:

ՏԵՐՈՒԻՆԱԿԱՆ ԱԴՅՈԹՔ

Յիսուս Քրիստոս մի անգամ իւր աշակերտների ցանկութեամբ պատուիրեց նրանց թէ, այսուհետեւ այսպէս աղօթք արէք՝

«Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ՚ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս Ամէն։ Մատթ. 7—13.

Այս պատճառաւ «Հայր մեր»-ը կոչում է «Տէրունական» աղօթք, որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոս աւանդեց իւր աշակերտներին։ Տէրունական աղօթքը բաժանում է երեք գլխաւոր մասի՝ այն է. 1) կոչումն, 2) եօթն խընդրուածք և 3) փառաբանութիւն։

ՏԵՐՈՒԻՆԱԿԱՆ ԱԴՅՈԹՔԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Կոչումն՝

Հայր մեր, որ յերկինս ես.

Մեր հայր, որ երկնքումն ես.

Ամէն անգամ, երբ մենք դիմում ենք մի

Գ Գ Օ Ֆ Ֆ

առ ամէ լոճառամ չ նորիւածաց լոճօրմ
առամ յամանոն զօն նորմարողավ իոդո զիս
և զուրան ովդանէ ոնկ լուսառասան և մաս
198 իջն դալու¹
առամ յամանոն յագթօրմ
զվագայ զուրուն ու որսի առան
առայս զանան ու աման աման ու աման
զանան ու աման
ա դո



առայս զանան ու աման ու աման
ա դո

անձնաւորութեան, նրա կոչման, պաշտօնի և
դիրքի համեմատ մի անուն ենք յատկացնում։
Այսպէս էլ մեր Փրկիչը սովորեցրեց մեզ, որ Աս-
տուծուն աղօթքով դիմելիս «Հայր» անունը տանք,
նախ այն պատճառով, որ նա ամբողջ տիեզերքն
ու մեզ ստեղծել է, սիրում ու խնամում է հօր
պէս և երկրորդ՝ որ բոլոր ճշմարիտ և խաղա-
ղաէր հաւատացեալներին համարում է իւր Որդի։

Աստուծած ամեն տեղ է, բայց որ ասում
ենք, որ յերկինս ես, այդ նշանակում է, որ մենք
աղօթելու ժամանակ մեր ուշադրութիւնը պար-
տաւոր ենք դարձնել աւելի դէպի երկինքը և
երկնայինը, առ ժամանակ թողնելով երկրաւոր
բաները։

Առաջին խնդրուածք՝

Սուրբ Եղիշի անուն Քո.

• Սուրբ լինի Քո անունը.

Թէպէտ Աստուծոյ անունը անկասկած միշտ
սուրբ է, բայց մենք աղօթքի մէջ էլ ցանկա-
նում ենք, որ սուրբ լինի Նրա անունը։ Այդ
նշանակում է, որ Աստծուն մենք խնդրում
ենք, որ մեզ տայ շնորհ, որ մեր կեանքը այն-
պիսի սրբութեամբ տանենք երկրիս վրայ, որ
հեռու պահենք մեզ ամէն տեսակ չար բաներից
և այնպէս ապրենք, ինչպէս որ վայել է Նրա
սուրբ անուան։ Այն ժամանակ միայն իրաւունք

կունենանք փառաբանել և յիշել Նրա սուրբ ա-
նունը։

Երկրորդ խնդրուածք՝

Եկեսցէ արքայութիւն Քո.

Գայ Քո թագաւորութիւնը։

Աստուծոյ թագաւորութիւն ասելով պէտք է
հասկանանք Նրա արդարութեան թագաւորու-
թիւնը։ Սրանով մենք խնդրում ենք, որ Աստուծ
մեզ կարողութիւն տայ հեռու պահելու մեզ ա-
մէն տեսակ մեղքերից և անարդարութիւնից, որ-
պէս զի արժանանանք բնակեցնել մեր սրտի և
հոգու մէջ Նրա շնորհած թագաւորութիւնը երկ-
րաւոր կեանքի ընթացքում։ Իսկ յափառենական
կեանքում ստանալ երկնքի արքայութիւն։

Երրորդ խնդրուածք՝

Եղիշին կամք Քո, որպէս յերկինս և յերկրի։

Քո կամքը թող կատարուի երկրիս վրայ
այնպէս, ինչպէս որ կատարում է երկնքում։

Այս խօսքերով խնդրում ենք Աստուծուն և
ցանկանում, որ այն բոլորը, ինչ որ մենք կա-
մենում ենք մեզ համար, լինին ոչ այնպէս, ինչ-
պէս մեր ցանկութիւնն է, այլ՝ այնպէս, ինչպէս
իրեն Աստուծոյն է հաճելի, որովհետև շատ ան-
գամ է պատահում, որ մենք մեր խնդրուածների

մէջ չարաշար սխալում ենք, հետեւով մեր
սխալ և անզուսազ ցանկութիւններին:

Եւ որովհետև գիտենք, որ մեր Ամենազէտ
և Ամենակարող Աստուածը աւելի լաւ գիտէ, թէ
ինչ է հարկաւոր մեղ, ուստի աղօթքի մէջ ևս
ասում ենք «թող լինի Քո կամքը»:

Թող լինի Քո կամքը ասելով, դարձեալ խընդ-
րում ենք, որ մեղ առյ կարողութիւն կատարե-
լու Նրա սուրբ կամքը երկրիս վրայ այնպէս,
ինչպէս որ երկնքումը կատարում են հրեշտակ-
ները և բոլոր սրբերը:

Չորրորդ խնդրուածք՝

Զհաց մեր հանսպազորդ տուր մեղ այսօր:
Մեր ամենօրեայ հացը այսօր էլ տուր մեղ:

Յիսուս Քրիստոս այս խօսքերով սովորեց-
նում է մեղ խնդրել մեր երկնաւոր Հօրից մեր
թէ մարմնաւոր և թէ հոգեսոր կեանքի անհրա-
ժեշտ կարիքները, որ պարտաւոր ենք խնդրել
ամենայն օր հաստատ հաւատով, միշտ պահելով
Աստուծոյ սուրբ պատուիրանները: Սակայն ա-
պագայ հոգեսոր և մարմնաւոր բարիքների վար-
ձատրութիւնը թողնելով մեր երկնաւոր Հօր խը-
նամքին և կամքին, որովհետև նա գիտէ, որ այդ
բոլորը մեղ հարկաւոր է, միանգամայն չ'դադա-
րելով ազնիւ ճանապարհով աշխատելուց:

Հինգերորդ խնդրուածք՝

Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք
թողումք մերոց պարտապանաց:

Ներիր մեզ մեր մեղերը, ինչպէս որ մենք
էլ ներում ենք մեր դէմ մեղանչողներին:

Յիսուս Քրիստոս այս խօսքերով սովորեց-
նում է մեզ, թէ մենք երբէք մեր մեղերից թո-
ղութիւն չենք ստանայ, եթէ չներենք մենք մեր
դէմ մեղաւորներին: Նոյնը կրկնում է իւր սուրբ
աւետարանի մէջ այսպէս «Եթէ մարդկանց կ'նե-
րէք իրանց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն
էլ կների ձերը, բայց եթէ չէք ներիլ նրանց,
ձեր երկնաւոր Հայրն էլ չի ներիլ ձեզ»:

Մրանից հետեւում է, որ աղօթքի մէջ յի-
շուած «պարտք» խօսքը յայտնուած է մեղքի փո-
խարէն. որովհետև երբոր մենք Աստծուց ստա-
ցած սուրբ օրէնքները և պատուիրանները չենք
կատարում, դրանով մենք մնում ենք պարտա-
կան Աստուծուն: Իսկ մեր պարտապանները, ո-
րոնց մենք պարտաւոր ենք ներել, նրանք են,
որոնք մեր դէմ գործել են տեսակ տեսակ չա-
րութիւններ և մենք չ'պէտք է նրանց արած
չարութիւններին չարութիւնով պատասխաննեք,
այլ վարուենք նրանց հետ, ինչպէս որ Տէրն է
պատուիրում թէ «Միրեցէք ձեր թշնամիներին»:

ԱԵցերորդ խնդրուածք՝

Եւ մի տանիր զմեղ ՚ի փորձութիւն։
Մեղ մի տանիր դէպի փորձութիւնը։

Այս խօսքերով խնդրում ենք, որ մեր երկնաւոր Հայրը հեռու պահի մեղ այն չար ու վատ դէպերից, կամ այնպիսի անձնաւորութիւններից, որոնք մեղ սխալեցնելով առաջնորդում են դէպի վտանգը, կամ երբ մենք հակւում ենք գնալ դէպի փորձութիւնը, ազատի մեղ այդ բոլորից։ Վերահաս փորձանքից միշտ ազատ մնալու համար, քրիստոնեան պարտաւոր է, որ միշտ աղօթի, ինչպէս Յիսուս Քրիստոս ասաց իւր աշակերտներին «Արթուն կացէք և աղօթք արէք, որ փորձանքի մէջ չ'ընկնէք»։

Եօթներորդ խնդրուածք՝

Այլ փրկեա զմեղ ՚ի չարէն.
Բայց փրկիր մեղ ամէն չարից։

Սրանով խնդրում ենք, որ Աստուած աշխարհի մէջ մեղ պատահած չարիքներից և վատ պատահարներից ազատէ և նոյնպէս ոյժ և կարողութիւն տայ հեռացնել նրանց մեղանից, որ չմասսէ մեր հոգին ու մարմինը։

Փառարանութիւն

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս Ամէն։

Որովհետև թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը Քոնն է ամէն ժամանակ։

Այս խօսքերը Տէրունական աղօթքի վերջաբանն է, որով մենք հաստատ յոյսով աղօթելուց յետոյ, համոզուած դիմում ենք մեր երկնաւոր Հօրը ասելով։ Տէր, որովհետև Քոնն է այս բոլորը, ինչ որ խնդրում ենք և Դու միայն իշխանութիւն ունիս զրանց վրայ, ուստի խնդրում ենք, որ մեզ կս մասնակից անս Քո փառքին։



:(Դա ովհեալ աղօթք է արևոյն)

Դուք մաս անցն անցն պայման միմայն
մասն քայ բայց բանց անպատճ մասն ուն
անունքնոց ուն և նունքնուն մասն ուն
անունքնոց ուն և նունքնուն մասն ուն

ԻՆՆԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Քրիստոնէական յոյսը բացատրելու ժամանակ ասուեց, որ յոյսի մանրամասն բացատրութիւնը մենք գտնում ենք նաև Յիսուսի ինն երանութիւնների մէջ, որովհետև քրիստոնեան եղբարձում է, նա պէտք է աղօթքի հետ միացնի իւր աշխատանքը, որպէս զի իւր արտայայտած մտքերը կենդանացնի բարի գործերով։ Բարեգործութիւն կատարելու դէպքում մեզ առաջնորդող պէտք է լինի Յիսուսի բարոյական վարդապետութիւնը, որը անուանում է Յիսուսի ինն երանութիւն։ սրանք են։

1) Երանի աղքատաց հոգով, զի նոցա է արքայութիւն երկնից։

(Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայութիւնը):

Այսինքն նրանք, որոնք որքան բարի գործեր են կատարում, դարձեալ իրանց այդ մասի մէջ աղքատ են համարում և չեն ցանկանում, որ մարդիկ իմանան և իրանց գովեն, այլ բարե-

գործութիւն անելով, համարում են թէ աննշան բարոյական պարտականութիւն են կատարել։

2) Երանի սգաւորաց, զի նոքա միիթարեսցին։

(Երանի սուգ անողներին, որովհետև նրանք պէտք է միիթարուեն):

Այսինքն նրանք՝ որոնք իրանց մեղքի համար լաց են լինում, զզջում են, փոխարէնը երկնքումը պէտք է միիթարուին։

3) Երանի հեղոց, զի նոքա ժառանգեսցին գերկիր։

(Երանի հեղ և խոնարհ մարդկանց, որովհետև նրանք պէտք է ժառանգեն երկիրը):

Այն է՝ նրանք, որոնք իբրև ճշմարիտ քրիստոնեայ ոչ իրանք են վրդովւում և ոչ ուրիշն վրդովեցնում, այդպիսիններին Տէրը խոստանում է, որ պէտք է երկնքումը ժառանգեն յաւիտենական երանութիւն, իսկ երկրիս վրայ անհատների ժառանգութիւնը (սէրը):

4) Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։

(Երանի նրանց, որոնք արդարութեան համար քաղցած ու ծարաւ են, որ արդարութիւնը սիրում են այնպէս, ինչպէս որ քաղցած մարդը

կերակուրը և ծարաւը ջուրը, որովհետև նրանք
երկնքումը պիտի կշամանան):

Եւ այս յագումն պէտք է հասկանալ ոչ
հացի ու ջրի, այլ յաւիտենական կեանքի և ան-
սահման երջանկութեան:

5) Երանի ողորմածաց, զի նոքա ողորմու-
թին զտցեն:

(Երանի ողորմութիւն տուող մարդկանց, ո-
րովհետև նրանք ևս պէտք է ողորմութիւն ստա-
նան):

Նշանակում է քրիստոնեան պարտաւոր է,
որ միշտ ողորմութիւն անէ կարօտեալներին թէ
նիւթապէս և թէ բարոյապէս օգտաւէտ խոր-
հուրդներով: Սրա փոխարէն Տէրը խոստանում է,
թէ նրանք Աստուածային դատաստանի առաջի-
րանց յանցանքների համար ներումն կը ստանան,
իսկ երկրիս վրայ կազատուեն ամեն տեսակ
փորձանքներից:

6) Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիք, զի
նոքա զԱստուած տեսցեն:

(Երանի մաքուր սիրտ ունեցողներին, որով-
հետև նրանք Աստուն պէտք է տեսնեն):

Մեր Փրկիչը այս խօսքերով խոստանում է, որ
եթէ մարդիկ միշտ սրտով և հոգւով կ'լինին մա-
քուր և անկեղծ, անշուշտ կ'արժանանան յաւի-

տենական երանութեանը, և այդ երանութեան
մէջ են գտնում իրանց վերջական երջանկու-
թիւնը, որը համարւում է իսկական աստուած-
տեսութիւն:

7) Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք
Աստուծոյ կոչեսցին:

(Երանի խաղաղութիւն սիրող մարդկանց,
այն է նրանց, որոնք չ'ունին ցանկութիւն կոռուել
և կոռուզներին էլ հաշտեցնում են, որովհետև
նրանք պէտք է Աստուծոյ Որդի կոչուին):

Փրկիչը խաղաղասէր մարդկանց անուանում
է Աստուծոյ Որդի, որովհետև այդպիսիները ի-
րանց գործով ճշմարիտ հետևող են համարւում
Աստուծոյ միածին Որդուն, որ իւր աշխարհ գա-
լով դարձաւ միջնորդ Աստուծոյ և մարդկանց
մէջ, ուստի և նրանք կոչւում են Աստուծոյ
որդի ըստ շնորհաց:

8) Երանի որ հալածեալ իցեն վասն արդա-
րութեան, զի նոցա է արքայութիւն երկնից:

(Երանի արդարութեան համար հալածուող
մարդկանց, որովհետև երկնքի արքայութիւնը
նրանք պէտք է ժառանգեն):

Փրկիչը այս խօսքերով ճշմարտութիւն սի-
րող և արդարութեան համար հալածանք կրող-
ներին խոստանում է, որ նրանք պէտք է եր-

կնքի արքայութիւնը ժառանգեն, փոխանակ այն
երկրաւոր բարիքների, որոնցից զրկուել են հա-
լածանք կրելով:

9) Երանի է Զեզ, յորժամ նախատեսցեն
զձեզ եւ հալածեսցեն եւ ասիցեն զամենայն բան
շար զձէնջ սուտ վասն իմ, ցնծացէք եւ ուրախ
լիբուք, զի վարձք ծեր բազում են յերկինս: (Մատթ.
Ե. 3—12):

(Երանի է ձեզ, երբ իմ պատճառով ձեզ վը-
րայ՝ ամէն տեսակ բանբասանք կանեն, ուրա-
խացէք, որովհետև երկնքումը ձեր վարձքը շատ
կ'լինի):

Փրկչի այս խօսքերից պէտք է համկանալ,
որ նրանք, որոնք ցանկանում են յաւիտենական
երանութիւն, պէտք է պատրաստ լինին սիրով
ընդունելու ամէն տեսակ հալածանք, զրպար-
տութիւն և մինչեւ անգամ մահ, ինչպէս մեր ե-
կեղեցու սուրբ նահատակները, որոնք զոհուել
են Յիսուսի անուան համար:



ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

Ք Ր Ի Ս Ո Ն Է Ա Կ Ա Ն Ս Է Ր

Քրիստոնէական սէրը մի ներքին գգացմունք
է, որով մեր սրտումը գոյանում է մի այնպիսի
ցանկութիւն, որ մեզ առաջնորդում է վարուել
աշխարհի մէջ համաձայն Աստուածային կամքի
և օրէնքների:

Աստուածային սէրը հաւատացեալի մէջ
կատարեալ է այն ժամանակ, երբ նա կատա-
րում է Աստուածային բոլոր պատուիրանները:
Յիսուս Քրիստոս այդ բոլոր օրէնքները ամփո-
փեց 'ի մի, ցոյց տալու համար, թէ մենք Աս-
տուածուն չենք կարող սիրել առանց մեր ընկե-
րին սիրելու, սորա համար Փրկիչը առւաւ մեզ
հետեւեալ օրէնքը. «Սիրիք քո Տէր Աստուածուն,
քո բոլոր սրտով և սիրեիք քո ընկերին այնպէս,
ինչպէս որ քեզ ես սիրում *»:

*) Յովհաննէս Առաքեալի խօսքերը սիրոյ պա-
տուիրանի մասին: «Սիրելիք, միմեանց սիրենք, որ սէրն

Աստուածային օրէնքը բաժանում է երկու մասի, բնական կամ ներքին, գրաւոր կամ արտաքին:

Բնական կամ ներքին օրէնքը մարդու խիղճն է, որ դրուած է հոգւոյ մէջ, որը ներքին ազդաբարութեամբ վկայում է մարդու բարի կամ չար կատարած գործերի ժամանակ, ուրախացնելով կամ տիսրացնելով նրան: Իսկ արտաքին կամ գրաւոր օրէնքն այն է՝ որ Աստուած տուաւ հրէաների առաջնորդ Մովսէս մարգարէի ձեռքով Սինայ լերան վրայ տասը պատգամը կամ հին ուխտի օրէնքները, որոնք դրուած էին երկու քարեղին տախտակների վրայ և սրանք են՝

1) Ես եմ Տէր Աստուած քո և մի եղիցին քեզ աստուածք բաց յինէն:

2) Մի արանցես դու քեզ կուսս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր և որ ինչ յերկիր՝ ի խոնարհ:

3) Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո՝ ի վերայ սնոտեաց:

4) Յիշեա սրբել զօրն շաբաթու:

5) Պատուեա զհայր քո և զմայր, զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս՝ ի վերայ երկրի:

6) Մի սպանաներ:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՕՐԷՆՔ ԵՒ ՏԱՄՆ ՊԱՏՈՒԻՒ- ՐԱՆԵՐ

Յիսուս Քրիստոս իբրև լրումն իւր երկրաւոր վարդապետութեան և ամփոփումն աւետարանական ճշմարտութիւնների, ասաց հետեւեալ խօսքերը. «Ինչպէս ուղում էք, որ մարդիկ ձեզ հետ վարուեցն, այնպէս էլ դուք նրանց հետ վարուեցէք», որովհետեւ այս իսկ են օրէնքները և մարգարէութիւնները: Ուրեմն Աստուծուն և ընկերներին սիրելու մէջ պարունակում են բոլոր օրէնքները, որոնք պարտաւորեցնում են մեզ ոչ թէ միայն հեռանալ չար գործերից, այլ և միշտ բարի գործել:

Աստուածանից է և նա ով որ սիրում է, Աստուածանից է ծնուած և ճանաշում է Աստուծուն: Նա, որ չէ սիրում Աստուծուն չի ճանաչիլ, որովհետեւ Աստուած սէր է: Նրանով Աստուծոյ սէրը երեցաւ մեղանում, որ Աստուած իւր միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որ նորանով կեանք ունենանք: Սրանում է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք Աստուծուն, այլ որ նա սիրեց մեզ և ուղարկեց իւր Որդուն մեր մեղքերի քաւութեան համար: Եթէ մէկն ասէ, թէ սիրում եմ Աստուծուն և իւր եղբօրն ատէ, նա ստախոս է, որովհետեւ նա, որ իւր տեսած եղբօրը չի սիրում, Աստուծուն, որ չի տեսէ, ինչպէս կարող է սիրել Եւ այս պատուէրն ունինք Նրանից, թէ նա որ Աստուծուն սիրում է, իւր եղբօրն էլ կ'սիրէ:

- 7) Մի շնար:
- 8) Մի գողանար:
- 9) Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ:
- 10) Մի ցանկանար տան ընկերի քո և մի ամենայնի, որ ինչ նորա իցէ:

Այս արտաքին կամ գրաւոր օրէնքները Աստուած տուեց այն ժամանակ, երբ մարդիկ այլ ևս չէին լսում իրանց խղճի ձայնին և վարելով մարմարական շրայլ կեանք, մեռցրին իրանց սրտի մէջ բնական օրէնքի (խղճի) ձայնը:

Սոյն պատուիրանները, որ կոչւում են Հին ուխտի բարոյական օրէնքներ, թէպէտ տուած է իրայէլացւոց ազգին, բայց մենք քրիստոնեաններս էլ պարտաւոր ենք կատարել, որովհետև Փրկիչը լրացնելով այս օրէնքները՝ հաստատեց ասելով, «Ես չեմ եկել հին ուխտի օրէնքները քանդելու, այլ եկել եմ նրանց լրացնելու»։

Բոլոր պատուիրանները դասաւորուած են հետևեալ կերպով.—առաջին չորսը պարունակում են իրանց մէջ դէպի Աստուած ունեցած մեր բոլոր պարտականութիւնները, իսկ վերջին վեցը դէպի մարդիկ և դէպի ընկերը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԽՄԱՆ

Ես եմ քո Տէր Աստուածը և բացի ինձանից ուրիշ աստուածներ չունենաս:

Սրանով հրամայում է ճանաչել, հաւատալ, սիրել և պաշտել միակ ճշմարիտ Աստուածուն, նրան ապաւինել և նրանից յուսալ ամենայն բարիք, որը և Քրիստոս հաստատեց ասելով «Սիրիք քո Տէր Աստծուն բոլոր սրտովդ և մտքովդ»։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԽՐԱՆ

Թեզ համար կուռք (սուտ աստուածներ) չ' շինես, ոչ վերեկի և ոչ ներքեկի բաների նման և նրանց չ'պաշտես:

Սրանով հրամայում է հեռանալ կեղծ աստուածպաշտութիւնից և ամէն տեսակ նիւթապաշտութիւնից, որ ընդհանուր խօսքով կոչւում է կոապաշտութիւն։ Կոապաշտութիւն է համարւում նաև որկրամոլութիւնը, ագահութիւնը, փառասիրութիւնը, գինեմոլութիւնը, թղթախաղութիւնը և այլն. և մարդկային այն բոլոր գործողութիւնները, որը չափազանցութեամբ կուռք դարձնելով աստուածանման յարգանք են տալիս նրանց:

ԵՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՒՐԱՆ

Զուր տեղը Աստծու անունը Հյիշես:

Այս պատուիրանով հրամայում է Աստուած,
որ հասարակ և դատարկ խօսակցութեան ժամա-
նակ չյիշենք Աստուծոյ անունը, այլ ամենակա-
րևոր դէպքերում և ազօթքի ժամանակ յիշել
միայն, այն էլ մեծ յարգանքով: Երդում չ'անել,
նա մանաւանդ սուտ երդում, որի դէմ մեր Փըր-
կիչը ասել է. Ամենաին մի երդնուլ, այլ եղիցի
ձեր բան, այսո՞ւ այս և ոչն' ոչ: Մատթ. Ե.
34—37:

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՒՐԱՆ

«Մաքումդ պահիր, որ շաբաթ օրը սուրբ
պահես, վեց օրում բոլոր գործերդ վերջացրու,
իսկ եօթներորդ օրը հանգստացիր, նուիրելով քո
Տէր Աստուծուն»:

Սոյն պատուիրանով Աստուած հրամայում
է, որ եօթնեկի վեց օրը գործենք, իսկ եօթնե-
րորդ օրը հանգստանանք կեանքի սովորական
բագրծերից, զբաղուելով հոգևոր գործերով և բա-
րեգործութիւն անելով: Դատապարտում է նաև
նրանց, որոնք այդ նուիրական և սուրբ օրերը

անց են կացնում անգործ և կամ զբաղւում են
անվայել և վնասակար գործերով:

Հրամայում է նաև սուրբ պահել ոչ միայն
եօթներորդ օրը, որ մենք անուանում ենք կի-
րակի կամ միաշաբաթ, այլ և այն տօները, ո-
րոնք սահմանուած են Յիսուսի, Տիրամօր և
նշանաւոր Ազգային-եկեղեցական սուրբերի յի-
շատակին: Այս պատճառաւ տօները լինում են՝
1. Տէրունական. 2. Աստուածածնի և 3. Սրբոց:
Տօների մի մասը շարժական են, միւս մասը
անշարժ: Շարժականը նրանք են, որոնց չենք
տօնում ամէն տարի միւնոյն ամսաթուին, իսկ
անշարժ՝ որոնց տօնում ենք միշտ միւնոյն ամ-
սաթուին:

Գլխաւոր շարժական տօնը՝ Քրիստոսի Յա-
րութիւնը կամ Զատիկին է. որովհետև բոլոր շար-
ժական տօները կախումն ունին Զատիկի տօնից,
այս պատճառաւ, ինչպէս որ Զատիկը փոխում
է, նորա հետ էլ փոխում են միւս շարժական
տօները, օրինակ՝ Ծաղկազարդ, Յիսուսի համ-
բարձումը, և. Հոգու գալուստը և այն:

Անշարժ տօները հետևեաներն են՝

1. Յիսուսի Ծնունդը և Մկրտութիւնը, որ
կատարւում է Յունուարի 6-ին:

2. Յիսուսի անուանակոչութիւնը՝ Յունուա-
րի 13-ին:

3. Յիսուսի քառամսօրեայ տաճար տանելը

կամ Տեառնընդառաջ, Փետրուարի 14-ին:

4. Սուրբ Աստուածածնի յղութիւնը Աննաւ-
յից՝ Դեկտեմբերի 9-ին:

5. Սուրբ Աստուածածնի աւետումը՝ Ապ-
րիլի 7-ին:

6. Սուրբ Աստուածածնի ծնունդը՝ Սեպ-
տեմբերի 8-ին:

7. Սուրբ Աստուածածնի երից ամաց ընծա-
յումը Տաճարին՝ Նոյեմբերի 21-ին. իսկ մնացած
տօները՝ Տէրունական և Սրբոց՝ շարժական են:

Այն բոլոր սրբոց տօները, որոնց յիշատակը
պարտաւոր ենք կատարել կիրակի օրուան հետ
հաւասար յարգանք մատուցանելով՝ հետեւալ-
ներն են.

1. Սուրբ Թագէոս և Բարդուղիմէոս առա-
քեալների երկու տօնը, իբրև Հայաստանի առա-
ջին լուսաւորիչների:

2. Սուրբ Գրիգոր Բ. Լուսաւորչի երեք տօ-
ները: 3. Հրեշտակապետաց: 4. Ամենայն սրբոց:
5. Ա. Էջմիածնի: 6. Սրբոց թարգմանչաց Մա-
հակ և Մեսրոպի: 7. Աբգար և Տրդատ թագա-
ւորների: 8. Սուրբ Ղեղնդեանց և Ա. Վարդանանց:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՒՐԱՆ

Պատուիր քո հօրն ու մօրը, որ քեզ համար
լաւ լինի և երկար կեանք ունենաս երկրիս վրայ:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է
պատուել և սիրել մեր մարմնաւոր և հոգեւոր ծը-
նողներին, այսինքն այն բոլոր անձանց, որոնք
մեզ վրայ խնամք ունին և մեզ համար միշտ
բարի են ցանկանում, օրինակ՝ մեծերին, հոգեւոր
հայրերին, խնամակալներին, բարերարներին և
ուսուցիչներին, օգնել նրանց հարկաւոր դէպքե-
րում և նրանց մահից յետոյ յարգել նրանց յի-
շատակը: Այսպէս վարուողներին Աստուած խոս-
տանում է երկար կեանք և ամենայն բարիք:

ՎԵՅԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՒՐԱՆ

Սպանութիւն չ'անես:

Սրանով Աստուած հրամայում է, որ ոչ մեզ
և ոչ մեր նման մարդուն, որ Աստուծոյ պատ-
կերն է կրում, իրաւունք չունինք սպանելու, ոչ
խօսքով և ոչ սրով, այն է ոչ բարոյապէս և ոչ
արին թափելով, ընդհակառակը ճշմարիտ քրիս-
տոնեան պարտաւոր է չմտածել անդամ վիասե-
լու իր ընկերին, այլ վարուել ամէնքի հետ սի-
րով և կարեկցել նրանց կարօտ և թշուառ դէպ-
քերում:

ԵՕԹԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՒՐԱՆ

Շնութիւն չ'անես:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է,

որ ամենայն մարդ իր սիրտը և հոգին, իր վարքն ու բարքը մաքուր և անարատ պահի, հեռու մնայ ամէն տեսակ անպարկեշտ խօսքերից և անձնաւորութիւնից և սիրէ միշտ առաքինի և սուրբ կեանք:

ՈՒԹԵՐՈՐԴԻ ՊԱՏՈՒԻՒՐԱՆ

Գողութիւն չ'անես:

Սրանով Աստուած հրամայում է գողութիւն չ'անել, այսինքն ուրիշի ունեցածը չ'սեպհականել: Գողութիւն են համարւում նաև ընկերին կողոպտելը, բռնի կերպով յափշտակելը, խաբէութիւնը առուտուրի մէջ, կաշտք վերցնելը, գտած բանը յետ չ'տալը, պարտք վերցնել ու չ'վճարելը, մշակի վարձը կտրելը. և այն:

ԻՆԵՐՈՐԴԻ ՊԱՏՈՒԻՒՐԱՆ

Ընկերոջդ մասին սուտ վկայութիւն չ'անես:

Այս պատուիրանով Աստուած արգելում է ամէն տեսակ զրախօսութիւնով արատաւորել մեր ընկերի պատիւը և բարի անունը, սուտ վկայութիւն տալ թէ դատաւորի և թէ մասնաւոր տեղերում, արգելում է նաև բամբասանք, զրպար-

տութիւն, հայհոյանք, լրտեսութիւն և այլն. իսկ սոյն տեսակ մեղքերից ազատ մնալու համար պարտաւոր ենք մեր լեզուն զսպել չար և նենդաւոր խօսքեր խօսելուց:

ԾՈՍԵՐՈՐԴԻ ՊԱՏՈՒԻՒՐԱՆ

Ընկերոջ և հարեանիդ թէ տանը և թէ նրա ունեցած ոչ մի բանին նախանձ աչքով չ'նայես:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է, որ մեր ընկերի բախտաւորութեան և նրա ամէն տեսակ բարիքների վրայ չ'նախանձել, այլ կամ աշխատել ուղիղ ճանապարհով ձեռք բերել այն ամէնը, որ մեր նախանձն է շարժում և դա կոչւում է բարի նախանձ և կամ գոհ մնալ մեր ունեցածով, համարել այն Աստուծուց շնորհած բարիք:

13. ԵՕԹՆ ՄԱՀՈՒԶԱՓ ՄԵՂՔԵՐԸ ԵՒ ՆԻԱՆՑ ՀԱԿԱԴԻՐ ԱՌԱՋԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր կատարած այն բոլոր գործերը, որոնք հակառակ են Աստուծոյ օրէնքներին և Յիսուս Քրիստոսի տուած բարոյական պատուիրաններին, այսպէս էլ չ'լսելը մեր խղճի ձայնին՝ համարւում է մեղք:

Առաջին մեղքը գործեցին մեր նախաճնողները, չ'կատարելով իրենց Ստեղծողի պատուէրը,

որին Սուրբ Գիրքը «սկզբնական մեղք» անունն է տալիս։ Այս մեղքի մէջ ծնվում են բոլոր մարդիկ, որովհետեւ մարդու ծնունդը սկիզբն է առնում մեղաւոր արմատից։

Բայց մարդիկ մեղանչում են և մկրտութիւնից յետոյ։ Այն մեղքերը, որ մարդիկ գործում են մկրտութիւնից յետոյ իրանց ամբողջ կեանքի ընթացքում, կոչւում են մոլութիւններ կամ ներգործական մեղքեր։ Ներգործական մեղքից մենք կարող ենք ազատուել սրտի կատարեալ զղումով և սուրբ հաղորդութիւնով։

Ներգործական մեղքը լինում է թեթև և մահուչափ։

Թեթև են համարվում այն մեղքերը, որ մարդ անկախ իրենից գործում է առանց որևէ չար նպատակ ունենալու։

Մահուչափ մեղքը այն է, որ մարդ գործում է դիտաւորուած չար նպատակով իր ընկերին վասակու համար և այդպիսի մեղքով մեղանչողները, Սուրբ Գրքի վկայութիւնով, բոլորովին զրկվում են Աստուծոյ խոստացած մեծ բարիքից.— այն է յաւիտենական և երջանիկ կեանքից։

Մահուչափ ասուած մեղքերը եօթն են՝

1. Հպարտութիւն. 2. Նախանձ. 3. Բարկութիւն. 4. Ծուլութիւն. 5. Ազահութիւն. 6. Որկրամոլութիւն. 7. Բղջախոհութիւն։

1. Հպարտութիւնը այն մեղքն է, որ մարդիր արժանաւորութիւնները շատ բարձր համարելով, արհամարհում է իր ընկերի բարեմասնութիւնները և այն բոլոր բարիքը և ընդունակութիւնները ինչ որ ունէ, չի համարում Աստուծուց և բնութիւնից ստացուած ձիրք, այլ իր սեփիական ուժով ձեռք բերած։

Սրա հակադիր առաքինութիւնն է խոնարհութիւնը, այն է՝ որ մարդ ամէն դիպուածում իրեն հաւասար ընկեր է ճանաչում ամէնքին և այն բոլոր աչքի ընկնող առաւելութիւնները ինչ որ զգում է իր մէջ, համարում է բնական և Աստուծուց իրեն պարգևած շնորհ։

2. Նախանձը լինում է երկու տեսակ, չար և բարի, չար նախանձը մարդուն հալումաշաշնող ցաւերից մինն է, որով միշտ մարդու հոգին հիւանդանում է, երբ տեսնում է իր ընկերին բարեյաջող պայմանների մէջ ու գիշեր ցերեկ մտածում է զրկել նրան իր ունեցածից։ Իսկ բարի նախանձը մարդու յառաջադիմութեան բնական միջոցներից մինն է, որ տեսնելով ընկերի բարձրանալը և նրա յառաջադիմելը՝ չի տիրում, այլ աշխատում է հաւասարուել նրան։

Սրա հակադիր առաքինութիւնն է ընկերախութիւնը, այն է՝ որ մարդ իր ընկերին պէտք է սիրի իր անձի պէս և նրա համար պէտք է մտածի այնպէս, ինչպէս իր համար է մտածում։

3. Բարկութիւնը ամենավսասակար հոգեկան հիւանդութիւն է, որ առաջ է գալի մարդու մէջ այն ժամանակ, երբ նա չի կարողանում իր վըրդովմունքը զսպել և իր ընկերի ամենաշնչին անախորժ և անարգական խօսքին պատասխանում է կատաղի կերպով, մոռանալով մարդկային ամէն արժանապատւութիւն:

Սրա հակադիր առաքինութիւնն է համբերովթիւնը, այն է՝ որ մարդ աշխատում է իր ընկերից վիրաւորանք ստացած ժամանակ մի քանի քաղէ զսպելիր բարկութիւնը, որով վիրաւորող ընկերին անսպասելի հիասթափութիւն և բարոյական տանջանք է պատճառում:

4. Ծուլութիւնը մի վսասակար ախտ է, որով մարդ ամէն բանից բարձր համարելով իր անձի հանգստութիւնը, բոլորովին մոռանում է կատարելու իր ամէն տեսակ պարտականութիւնները:

Սրա հակադիր առաքինութիւնն է աշխատասիրովթիւնը, որով մարդ ցանկանում է, որ միշտ կատարած լինի իր բոլոր պարտականութիւնները, որոշելով իր հանգստութեան և աշխատելու ժամերը:

5. Ազահութիւնը մարդուն հոգեպէս և ֆիզիքապէս տանջող մի հիւանդութիւն է, որով մարդ ոչ մի միջոցի առաջ կանգ չ'առնելով, թէ լաւ և թէ վատ ճանապարհներով աշխատում է

հետզհետէ աւելացնել իր նիւթական միջոցները, երբէք չ'մտածելով իր անչափ հարստութիւնից բաժին հանել կարօտ մարդկանց:

Սրա հակադիր առաքինութիւնն է ողորմածովթիւնը, երբոր մարդ մտածում է թէ Աստուծոյ տուած բարիքը միայն ինքը չ'պէտք է վայելէ, այլ պարտաւոր է նրանով օգնել նաև կարօտ և թշուառ մարդկանց և կատարել բարի և Աստուծահաճոյ գործեր:

6. Որկրամոլութիւնն է գերի դառնալ իր ստամոքսին և անչափ ուտել-խմելով բթացնել իր միտքը և կորցնել առողջութիւնը:

Սրա հակադիր առաքինութիւնն է չափարութիւնը, որով մարդ իր հաստատ կամքի ուժով կարող է չափաւորութիւն պահպանել թէ ուտել-խմելում և թէ կեանքի բոլոր հանգամանքներում չափաւորել իր ցանկութիւնները, պահպանելով իր հոգեւոյ մաքի և անձի զուարթութիւնը:

7. Բղջախոհութիւնը մարդու վարք ու բարքը ապականող մի ախտ է, որով անվերջ հետեւելով իր վատ կրքերին, չի կարող զսպել իրեն:

Սրա հակադիր առաքինութիւնն է Ողջախոհովթիւնը, որով մարդ աշխատում է, որ իր կեանքը մաքուր անցկացնի, անարատ վարք ունենայ, հեռանայ այն բոլոր անվայել մտածմունքներից և գործերից, որոնք տանում են մարդուն դէպի անարդ գործերը:

ՅԱՆԿ

Յառաջաբան

1. Քառաջաբան 3
2. Քրիստոնէական ուսման նախապատ-
րաստական գիտելիքներ 5
3. Աստուածային յայտնութիւնն և Աստու-
ածաշունչ սուրբ գիրք 6

ԱԹԱԶԻՇ ՄԵՍՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԻԱՏ

- | |
|---|
| 4. Հաւատի հանդանակը և նրա ծագումն. 9 |
| 5. Հաւատամքի Ա. յօդուածի բացատրու-
թիւնը. 15 |
| Ամենասուրբ Երրորդութիւն. 16 |
| Աշխարհի և մարդու ստեղծագործու-
թիւնը. 18 |
| Աստուծոյ նախանամութիւնը. 21 |
| 6. Հաւատամքի Բ. յօդ. բացատրութիւնը. » |
| » Դ. յօդ. բացատրութիւնը. 23 |
| » Ե. յօդ. բացատրութիւնը. 26 |
| » Ե. յօդ. բացատրութիւնը. 27 |
| » Զ. յօդ. բացատրութիւնը. 28 |
| » Է. յօդ. բացատրութիւնը. » |



Հաւատամքի Ը. յօդ. բացատրութիւնը.	29
» Թ. յօդ. բացատրութիւնը.	30
Հաւատամքի Ժ. յօդ. բացատրութիւնը.	33

7. ԵԿԵՂԵՑՈՒԻ ԵՕԹՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ	
Մկրտութիւն	33
Դրոշմ	35
Ապաշխարութիւն	36
Հաղորդութիւն	37
Ամուսնութիւն կամ պսակ	39
Կարգ կամ Ձեռնադրութիւն	41
Օծումն կամ Այցելութիւն հիւանդաց	42
Հաւատամքի Ժ. յօդ. բացատրութիւնը	43
» ԺԲ. յօդ. բացատրութիւնը	44

ԵՐԿՐՈՐԴԻ ՄԱՍՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՅՈՅՆ

8. Աղօթքի մասին ընդհանրապէս	46
9. Տէրունական աղօթք	49

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Կոչումն	49
Առաջին խնդրուածք	50
Երկրորդ խնդրուածք	51

Երրորդ խնդրուածք	51
Չորրորդ խնդրուածք	52
Հինգերորդ խնդրուածք	53
Վեցերորդ խնդրուածք	54
Եօթներորդ խնդրուածք	»
Փառաբանութիւն	55

10. Խճ երանութիւններ	56
----------------------	----

ԵՐՐՈՐԴԻ ՄԱՍՆ

11. Քրիստոնէական սէր	61
12. Աստուածային օրէնք և Տասն պատուիրաններ	
Առաջին պատուիրան	62
Երկրորդ	»
Երրորդ	»
Չորրորդ	»
Հինգերորդ	»
Վեցերորդ	»
Եօթերորդ	»
Ութերորդ	»
Իններորդ	»
Տասներորդ	»
13. Եօթն մահուչափ մեղքերը և նրանց հակադիր առաքինութիւններ	71

16 զնաւողընի բղայի
 25 զնաւողընի բղայի
 35 զնաւողընի բղայի
 45 զնաւողընի բղայի
 55 մեջնաւողընի

95 դժմայի տակը սահ 01

ՄԱՐԴ ԳԻՒՌԻ

10 ԱԲ իւս մարդ ամեն պատահք 01
 20 մասնաւութեան մասնաւութեան 01
 30 մարդ ամեն պատահք պատահք 01
 40 մարդ ամեն պատահք մասնաւութեան 01
 50 մարդ ամեն պատահք պատահք 01
 60 մարդ ամեն պատահք պատահք 01
 70 մարդ ամեն պատահք պատահք 01
 80 մարդ ամեն պատահք պատահք 01
 90 մարդ ամեն պատահք պատահք 01
 100 մարդ ամեն պատահք պատահք 01
 110 մարդ ամեն պատահք պատահք 01
 120 մարդ ամեն պատահք պատահք 01
 130 մարդ ամեն պատահք պատահք 01
 140 մարդ ամեն պատահք պատահք 01
 150 մարդ ամեն պատահք պատահք 01
 160 մարդ ամեն պատահք պատահք 01
 170 մարդ ամեն պատահք պատահք 01
 180 մարդ ամեն պատահք պատահք 01
 190 մարդ ամեն պատահք պատահք 01
 200 մարդ ամեն պատահք պատահք 01



H A P
2-95

ԳԻՆՆ Է ՅՈՂԵԿ

Պահեստը գտնվում է «Գիր» գրավաճառանոցում